ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1953 Общественные науки

Գ. Ստեփանյան

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ „ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ“ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ 1862—1872 ԹԹ. ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ

Մ. Նալբանդյանը հայ հասարակական միտքը բարձրացրեց մի նոր աստիճանի։ Նա, հետևելով 60-ական թվականների ռուսական առաջավոր գաղափարախոսությանը, հասարակական-քաղաքական մի շարք հարցերի տվեց նոր՝ ռևոլյուցիոն-դեմոկրատական մեկնաբանություն, ստեղծելով իր գաղափարական հետևորդների մի մեծ խումբ, որը պայքարեց նրա տրադիցիաների տարածման համար ցարական և սուլթանական խստագույն պայմաններում։

Նալբանդյանի ազդեցությունը հայ հասարակական մտքի վրա մեծ և չուսումնասիրված հարց է, որի մասին ակնարկներ, ցաք ու ցրիվ դիտողություններ միայն կան հայ մեծ մտածողին նվիրված աշխատություններում։

Այդ ազդեցության ուշագրավ էջերից մեկն է Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության առաջացրած հետաքրքրությունը արևմտահայ իրականության մեջ, 1862—1872 թթ. տասնամյակում, որին նվիրված է ներկա հոդվածը։

I

Հայտնի է, որ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը լույս է տեսել Փարիզում, 1862 թ. ապրիլ ամսին։ Մ. Բակունինի նամակներից, ուղղված Մ. Նալբանդյանին, երևում է, որ այդ գրքի առաքումը Ռուսաստան, իրենց վրա էին վերցրել Բակունինն ու Օգարյովը[1] հենց այն օրերին, երբ Նալբանդյանը պատրաստվում էր վերադառնալ արտասահմանից։

«Երկրագործության» այն 10 օրինակները, որ Բակունինը ուղարկել է Վետոշնիկովի միջոցով, բռնագրավվեցին ցարական կառավարության կողմից և ընկան պահնորդական բաժնի ձեռքը, սակայն դրանից առաջ ուղարկված օրինակները, ամենայն հավանականությամբ, հասել են Ռուսաստան և բաժանվել նախօրոք որոշված մարդկանց։ Ովքեր են եղել այն վստահելի մարդիկ, որոնց հասցեն տվել է Նալբանդյանը Լոնդոնի պրոպագանդիստներին, հայտնի չէ։

«Երկրագործության» այլ օրինակներ ի՛նչ ձևով են թափանցել Ռուսաստան, նույնպես հայտնի չէ։ Անտարակույս դրանց թիվը եղել է շատ սահմանափակ։

---

[1] *Մ. Բակունինը մայիսի 18-ի նամակում ասում է, որ շուտով, հենց որ ստանա կուղարկի Նալբանդյանին՝ պահանջած գիրքը (տես „Былое“, 1906, № 7, էջ 195), հունիսի 4-ի նամակում գրում է, որ բրոշյուրները ստացել է և մի չորս օրից կուղարկի 2 օրինակ։ Թե Կոստերյովը (այսինքն Օգարյովը) նույնպես հանձն է առել մի քանի օրինակ ուղարկել („Былое“) № 7 էջ 205), իսկ հուլիսի 3-ի նամակում արդեն հայտնում է, որ ուղարկում է ևս 10 օրինակ «Խոհարարական գրքից» ու դրանով ընդամենը ուղարկած է լինում 14 օրինակ (նույնը, № 7, էջ 211)։*

Ցարական խստագույն հետապնդումները անհնար են դարձրել այդ աշխատության մեծ քանակությամբ փոխադրությունը Ռուսաստան։ Դրա համար էլ «Երկրագործությունը» առաջավոր երիտասարդության մեջ տարածվել է արտագրվելով ու ձեռքից-ձեռք անցնելով, ստեղծելով Նալբանդյանի կողմնակիցների մի մեծ խումբ, որը ցենզուրական խստագույն պայմաններում անդավաճան պաշտպանել ու տարածել է «Երկրագործության» գաղափարները, պայքարել այդ գաղափարների կենսագործման համար։

«Երկրագործությունը» լույս տեսնելուց անմիջապես հետո թափանցել է նաև Թյուրքիա։ Համենայն դեպս 1862 թ. հունիս ամսին այն եղել է «Մեղվի» խմբագրությունում և հիմք դարձել Սվաճյանի մի առաջնորդողին, որին կանդրադառնանք ստորև։

Ունենք նաև Արփիարյանի մի վկայությունը, որ հենց 1862—63 թթ. «Երկրագործությունը» եղել է երիտասարդության ամենասիրած գրքերից մեկը. հայրերն այն կարդացել են իրենց որդիներին և պատվիրել՝ հետևել այդ գրքի քարոզած գաղափարներին։ Կան նման այլ վկայություններ էլ։

Գուցե է՛լ ավելի շատ փաստեր մեզ հասած լինեին, «Երկրագործության» ստացման ու տարածման մասին հայ իրականության մեջ, եթե նրա հեղինակը հենց աշխատության լույս ընծայումից անմիջապես հետո չձերբակալվեր և չհամարվեր քաղաքական հանցագործ, եթե մարդիկ հարկադրված չլինեին նրա անունը տալուց զգուշանալու։

Նալբանդյանի անվան շուրջը ստեղծված այդ խորհրդավոր լռությունը և արգելքը, ըստ էության շարունակվեց մինչև 20-րդ դարի սկզբները, արևելահայ իրականության մեջ մինչև 1905 թվականի առաջին ռևոլյուցիայի տարիները, երբ ռուսական «Былое» ժուռնալում հրապարակվեցին «Լոնդոնի պրոպագանդիստների» դատավարության հետ կապված նյութերը, իսկ արևմտահայ իրականության մեջ (չհաշված ռուս-թուրքական պատերազմի մի քանի տարիները), մինչև 1908 թ., մինչև այսպես կոչված օսմանյան սահմանադրության տարիները, երբ Նալբանդյանի անունը սկսեց երևալ ո՛չ միայն առաջավոր մամուլում ու հրատարակություններում, այլև տարբեր գույնի և համոզմունքի մարդկանց հրատարակություններում, որոնք ցանկանում էին իրենց դասակարգային շահերի համար օգտագործել նրա մեծ ժողովրդականությունը։

Այսպիսով, մի ամբողջ հիսնամյակ Նալբանդյանի մասին անհնար է եղել ազատորեն գրել և խոսել։ Գաղափարական այն ալդեցությունը, որ թողել է «Երկրագործությունը» հայ հասարակական մտքի վրա, կատարվել է գերազանցապես անլեգալ ճանապարհով, այդ գրքի մասին հաճախ խոսվել է եզոպոսյան լեզվով։

Այն բանավեճը, որ մղվել է Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության բարձրացրած հարցերի շուրջը, նույնպես

---

[1] Ուշագրավ են հայ գրողներից հատկապես Հ. Հակոբյանի, Նար-Դոսի և ուրիշների վկայությունները «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության ձեռագիր օրինակների արտագրման ու տարածման մասին։ Նար-Դոսը վկայում է, որ 60-ական թվականների կեսերին, աշակերտական տարիներին, ինքը և Ա. Ծատուրյանը ամբողջապես արտագրել են «Երկրագործությունը», որը բազմացվել է խմորատիպ և տարածվել աշակերտների մեջ։ (Տես Գրական թանգ. Ա. Ծատուրյանի արխիվ, № 111)։

[2] «Արևելք». 1888 թ. № 1389։

մղվել է քողարկված ձևով և միայն այդ բանը նկատի ունենալով հասկանալի կարող է դառնալ այն արտակարգ զգուշությունը, որ հանդես են բերել Նալբանդյանի գաղափարների պաշտպանությամբ հանդես եկող դեմոկրատ գործիչները, անդամ նրան անուղղակի կերպով քննադատել փորձող լիբերալները։

Ինչպիսի հարցեր էր բարձրացնում Նալբանդյանը իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատության մեջ։ Համառոտակի ծանոթանանք այդ հարցերին և ապա փորձենք ցույց տալ, թե դրանցից որոնք էին, որ քննարկման առարկա դարձան տարբեր հոսանքների պատկանող մամուլում և հրատարակություններում։

Սոցիալական և ազգային շարժման հիմքը համարելով տնտեսական պրոբլեմը, Նալբանդյանն իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ պահանջում էր ամենից առաջ լուծել տնտեսական հարցը։ Տնտեսական հարցի լուծման համար նա առաջադրում էր հողային հարցի լուծումը՝ ռևոլյուցիոն ճանապարհով։ Սուր քննադատության ենթարկելով 1861 թվականի փետրվարյան ռեֆորմը, նա գտնում էր, որ վերևից եկած և ոչ մի ազատություն չի կարող տալ գյուղացուն հող և հաց։ Վերևից եկած ազատությունը նա նմանեցնում էր առավոտյան ցողին, որը չէր կարող սնել ծառի արմատը։ Նրա կարծիքով տնտեսական խնդիրը «այն բազմակնճիռ գորդիասի կապը» կարելի է լուծել միայն ռևոլյուցիոն ճանապարհով։ Բնութագրելով հետռեֆորմյան Ռուսաստանի վիճակը, Նալբանդյանը գտնում էր, որ բազմամիլիոն ճորտ գյուղացիության համար ստեղծված դրությունից դուրս գալու միակ ելքը կացնի ճանապարհն է։ Հետևելով «Կոլոկոլ»-ում տպված «Ռուս մարդու» կոչին, նա ուղղակի պաշտպանում էր այն միտքը, թե հասել է ժամանակը, երբ «ստրուկը կացնով կվճռի գործը»։

Նալբանդյանը գտնում էր, որ հողը պետք է պատկանի այն մշակող գյուղացուն և առհավետ օգտագործվի նրա կողմից՝ առանց վաճառելու իրավունքի։

Չկարողանալով տեսնել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման պրոգրեսիվ նշանակությունը, Նալբանդյանը, ինչպես և Չերնիշևսկին, ձգտում էր գյուղական համայնքի միջոցով հասնել սոցիալիզմին, իսկ այդպիսի համայնքի ամրապնդման առաջին նախապայմաններից մեկը նա համարում էր գյուղացուն հողի հետ կապելու անհրաժեշտությունը։ Այստեղից էլ՝ երկրագործությանը նախապատվություն տալու պահանջը։

Երկրագործությանը առաջնակարգ նշանակություն տալով, Նալբանդյանը հասկանում էր այնպիսի երկրագործություն, երբ աշխատավոր ժողովուրդը տեր էր դառնալու իր մշակած հողին ու նրանից ստացված արդյունքին։

Նալբանդյանը դեմոկրատական դիրքերից էր քննության առնում նաև հայ ժողովրդի ազգային հարցը, նա ձգտում էր, որպեսզի հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումը դառնա ռևոլյուցիոն դեմոկրատական շարժման մասը, ուղղված լինի ճորտատիրական կարգերի դեմ և կապվի Ռուսաստանում խմորվող գյուղացիական ռևոլյուցիայի հետ։

Պայքար մղելով հայ բուրժուական նացիոնալիզմի դեմ, նա իր աշխատության մեջ տալիս էր ազգության և պետության ճիշտ բացատրությունը, ընդհուպ մոտենալով պետության դասակարգայնության գաղափարին։

Անդրադառնալով ազգության հարցին, նա գտնում էր, որ ազգությունը պատմական կատեգորիա է, հավերժական չէ, առաջացել է պատմական որոշ էտապում և պետք է վերանա ապագայում։

Նալբանդյանը ազգային հարցի հետ սերտորեն կապում էր մեծ պետությունների գաղութային քաղաքականության քննադատության հարցը, այն, որ Անգլիան, Ֆրանսիան և այլ պետություններ, քաղաքակրթություն տարածելու պատրվակով ստրկացնում են թույլ ու անզեն ժողովուրդներին, կողոպտում, թալանում, շահագործում նրանց։

Գտնելով, որ «ստրկության, աղքատության մեջ ազատություն չի կարող լինել», նա կոչ էր անում հավատք չընծայել լիբերալների «ազատություն, եղբայրություն, հավասարություն» լոզունգներին, ցույց տալով, որ բուրժուազիան ըստ էության նման լոզունգներով է, որ խաբում է աշխատավորությանը և փորձում նրան հեռու պահել դասակարգային պայքարից։

Ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի խիստ քննադատությունը, որին մենք հանդիպում ենք «Երկրագործության» մեջ, ըստ էության ուղղված էր հայ լիբերալիզմի դեմ, մասնավորապես արևմտահայ լիբերալիզմի, որի պարագլուխները՝ Գ. Օտյանը, Սերվիչենը, Ռուսինյանը, Հ. Վարդանյանը և ուրիշները, համախմբված «Բարեգործական» ընկերության շուրջը, պայքարում էին ռեֆորմների համար, փառաբանելով ֆրանսիական բուրժուազիայի կատարած ռևոլյուցիան, որը իրականում, ինչպես Նալբանդյանն էր ցույց տալիս, գյուղացուն թողեց նույն աղքատ և ստրկական վիճակում։

Նալբանդյանը փիլիսոփայությունը համարում էր աշխատավոր ժողովրդի տնտեսական ու քաղաքական պայքարի կարևոր զենքերից մեկը։ Նրա կարծիքով փիլիսոփայության առարկան մարդն է, հասարակական կյանքը։ Այն փիլիսոփայությունը, ասում էր նա — որն անմիջապես չի բխում մարդկային կյանքից, «իմաստակություն է ու խաբեություն»։ «Մարդն է փիլիսոփայության և՛ հեղինակը և՛ առարկան», նյութն է սկզբնայինը, հավերժականը, անկորընչելին։

Նալբանդյանի մոտ նկատելի են և դիալեկտիկայի մի շարք կարևորագույն դրույթներ. նա գտնում էր, որ բնությունը, նյութը, հավերժ շարժման մեջ է։ Բնությունը չունի հանդիստ, գտնվում է անդադար շարժողության մեջ», «կյանքն անդադար շարժողություն է, նյութերի անդադար փոխանակություն», ոչինչ չի կորչում բնության մեջ։ Նալբանդյանն այդ շարժումը չի ընդունում մեխանիկորեն։ Շարժման ընթացքում պրոցեսը և ռեգրեսը, նորն ու հինը պայքարի մեջ են, որից հաղթող է դուրս գալիս նորը, առաջադիմականը «կյանքի հոսանքը միայն մի ընթացք ունի դեպի առաջ» գրում է նա,— և եզրակացնում, որ անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը հնի դեմ, իր դարն ապրած ամեն մի երևույթի դեմ։

Մ. Նալբանդյանը, մերժելով իդեալիստական փիլիսոփայությունը, խիստ քննադատության ենթարկելով հատկապես Հեգելի ռեակցիոն հայացքները, ընդունում էր ռուս մատերիալիստ մտածողների առաջադրած ուղին՝ հասարակական կյանքի վերափոխման մասին։

«Երկրագործության» մեջ արծարծվող հարցերից մի քանիսը՝ սոցիալական հարցը, ազգության, բուրժուական ռևոլյուցիայի գնահատման, ինչպես և մատերիայի և հոգու փոխհարաբերության փիլիսոփայական հարցերը և այլ հարակից խնդիրներ լայնորեն քննարկվում են 1862—1872 թթ. տասնամյակում։

II

Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությանը առաջինը արձագանքում է Հ. Սվաճյանը «Մեղու» պարբերականում։

Սվաճյանը, որ Նալբանդյանի «Երկու տող» աշխատությանը լայնորեն արձագանքեց «Մեղվի» էջերում, նախքան նրա տպագրվելը մտքեր նախապատրաստեց, և տպագրվելուց հետո էլ գրեթե ամբողջությամբ արտատպեց այն, ցենզուրական և այլ նկատառումներով նույնքան ազատ չկարողացավ վարվել «Երկրագործության» հետ։ Սվաճյանը այդ աշխատությանը անդրադարձավ մի առաջնորդողով[1], որտեղ ո՛չ Նալբանդյանի անունն է հիշատակվում, ո՛չ էլ Սիմեոն Մանիկյանի։

Հ. Սվաճյանի վերոհիշյալ առաջնորդողը, որի վերնագիրն է Նալբանդյանի հայտնի միտքը, թե «Ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի», ըստ էության մի շրջադարձային կետ է «Մեղվի» համար։ Այդ առաջնորդողում Սվաճյանն առաջ է քաշում «Երկրագործության» մեջ բարձրացվող հարցերից մի քանիսը և ճշտում իր դիրքերը նրանց նկատմամբ։

Որո՞նք էին այն գաղափարները, որ «Երկրագործությունից» անցնում էին «Մեղվի» էջերը և մուտք գործում Թուրքական լծի տակ տառապող հայ ժողովրդի մեջ։

Ամենից առաջ, Սվաճյանը, հետևելով Նալբանդյանի մատերիալիստական այն թեզին, թե մարդկային կյանքի երջանկությունը ոչ թե պետք է որոնել «օդի անչափելի բարձրության մեջ», այլ «երկրագնդի վրա», փորձում էր այդ տեսակետը ելակետ ունենալով, շոշափել հայ ժողովրդի ազատության ու փրկության հարցը։ Նա, պատասխանելով կղերապահպանողական գաղափարախոսների մոլորեցուցիչ պրոպագանդային, որի նպատակն էր աշխատավոր ժողովրդի տնտեսական պայքարը մոռացնել տալ հանդերձյալ կյանքի ապառնի խոստումներով, հակադրվելով նաև հայ լիբերալների վերացական ծրագրերին, գրում էր «Ազգի հիմը երկրիս մակերևույթի վրա դրված է և օդին մեջ կախված չէ»[2]։

Այս թեզը բառացի գալիս էր Նալբանդյանից։ Նալբանդյանը, «Երկրագործության» մեջ գրում էր... «Ազգի հիմքը դրված է երկրի մակերևույթի վերա և կախված չէ օդի մեջ»[3]։

Ազգի հիմքը, Մ. Նալբանդյանի նման տեղափոխելով երկրագնդի վրա, Սվաճյանը սիրով որդեգրում է Նալբանդյանի մյուս թեզը, այն, որ վճռողը ոչ թե վերացական ազատությունն է, ինչպես այդ պաշտպանում էին բուրժուական լիբերալները, կարծելով, թե նման ազատությամբ կամ լուսավորությամբ հնարավոր է լուծել տնտեսական պրոբլեմը,— այլ սոցիալական հարցի, տնտեսական պրոբլեմի լուծումը։

---

1 Առաջնորդողը լույս է տեսել «Մեղվի» 1862 թ. հունիսի 20-ի համարում։ Այնտեղ Հ. Սվաճյանը հայտնում է, որ գրելով այդ առաջնորդողը կատարում է իր պարբերականի նախընթաց համարներից մեկում տված խոստումը։ Նա այդ խոստումը տվել է «Մեղվի» մայիսի 10-ի համարում, կնշանակի «Երկրագործությունը» կ. Պոլսում եղել է 1862 թ. մայիս ամսին, կամ Սվաճյանը իմացել է նրա լույս տեսած լինելը այդ օրերին։

2 «Մեղու», 1862 թ. հունիսի 20, № 165։

3 Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 408։ Երևան, 1953։

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ Նալբանդյանն այդ հարցին տվել է սպառիչ պատասխան.

«Ազատությունը ըստինքյան լոկ խոսք է և իրողապես չի կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն[1]։

Սվաճյանը, պաշտպանելով Նալբանդյանի վերոհիշյալ տեսակետը, միաժամանակ հակադրվելով ավետարանի այն քարոզին, թե մարդ ոչ միայն հացիվ կեցցե, այլև բանիվ տյառն», գրում էր «Պարտավորյալ եմք ըսել, թե ոչ միայն ուսմամբ կեցցե մարդ, այլ միանգամայն և հացիվ»[2]։

Այնուհետև՝ շեշտելու համար, որ այդ միտքը նա վերցրել է Միքայել Նալբանդյանից, և խուսափելով նրա անունը տալուց, գրում է. «Այս համոզմամբ է, որ ճշմարիտ հայու մը ըսածին նման,ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի ըսելով, նույնը մինչև մեր վերջին շունչը պիտի կրկնենք»[3]։

Ճշմարիտ հայը Նալբանդյանն է, որի մտքերն այստեղ առանց չակերտի մեջ է բերում Սվաճյանը և ուխտում մինչև կյանքի վերջը հավատարիմ մնալ իր մեծ ուսուցչի պատգամներին։

Տնտեսական խնդրի առաջնությունը որոշակի կերպով առաջ քաշելուց հետո, Հարություն Սվաճյանն անցնում է Նալբանդյանի մի այլ կարևոր թեզի բնորոշմանը։ Նա նույնպես, Նալբանդյանի նման, սահմանազատվում է լիբերալներից, որոնք քարոզում էին ամբողջ հայ ազգության միասնությունը և գտնում է, որ ազգ ասելով չպետք է հասկանալ մի բուռ հարուստների,— նրանց հարստությունը չպետք է համարել ամբողջ ազգի հարստություն։ Հակադրվելով լիբերալներին, որոնք մի քանի ամիրայական տների հարստությունը փորձում էին ներկայացնել որպես ամբողջ ազգի հարստություն, Սվաճյանը գրում է. «Ուրեմն, ինչպես որ արքունի թագ մը գլխու ցավ չի կրնար անցունել, և պատագրոսը (նիգրիզ) փայլուն մուճակի մը մեջ չապաքինիր. այնպես ալ ապահով ըլլանք, որ մեր ազգին մեջ գտնված թվավոր հարուստներուն բոլոր գույքը չի կրնար ճոխ, հարուստ և երջանիկ ընել։ ... Ինչ հարկավոր է մեզի դաս մը ազնվական կոչվածներու անհուն հարստության տեր ըլլալը, մինչդեռ միլիոններու կյանքը կախված է միմիայն երկրագործութենե»[4]։

Սվաճյանի այս բոլոր դատողությունները գրեթե բառացի գալիս են «Երկրագործությունից»։

Նալբանդյանը, հասնելով այն գիտակցության, որ շահագործողական դասակարգերի շահերը և իշխող պետության շահերը նույնն են, օրինակ էր բերում Անգլիային և ցույց տալիս, որ Անգլիայի ամբողջ հարստությունը պատկանում է մի քանի մեծատունների, իսկ հասարակ ժողովուրդը մի հատ ցից զարկելու հող չունի։ «Բայց հարկավոր է իմանալ, գրում էր նա,— որ տերությունքը ազգ չեն, և տերության շահը, ազգի շահի հետ բնավ վերաբերություն չունի, քանի որ տերության կազմությունը այնպես է, ինչպես որ կան այսօր»[5]։

Հետևելով Նալբանդյանին, Սվաճյանը ազգության հիմքը համարում է աշխատավոր ժողովրդին, գյուղական աշխատավորությանը և նշում, որ իրեն զբաղեցնող հարցը հայ աշխատավոր ժողովրդի տնտեսական վիճակի բարվոքման հարցն է։

---

1 Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 421։
2 «Մեղու», 1862, № 165։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում։
5 Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 407։

Միքայել Նալբանդյանը, չկարողանալով տեսնել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման անխուսափելիությունը և դրա վճռական գործոն լինելը կապիտալիստական տնտեսության մեջ, աշխատավոր ժողովրդի տնտեսական ապահովության միակ ճանապարհը համարում էր երկրագործությունը և գրում էր.

«Հասարակ ժողովրդի համար ուղղակի, և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպես անհրաժեշտ, ինչպես ջուրը ձուկի համար, միակ աղբյուրը ապրուստի և հարստության է երկրագործությունը»[1]։

Սվաճյանն այդ առաջնորդողում անդրադառնալով երկրագործության կարևորությանը, բառացի մեջ է բերում Նալբանդյանի վերոհիշյալ միտքը։

Չխուսափելով հայտնել, որ այդ միտքը «ճշմարիտ հայի» խոսքերն են, նա ասում է, որ իր ամբողջ էությամբ համոզված է, որ «Հասարակ ժողովրդի մի մասի համար ուղղակի, և մնացած մասի համար անուղղակի, բայց և այնպես անհրաժեշտ — ինչպես որ ջուրը ձուկի համար, միակ աղբյուրը ապրուստի և հարստության երկրագործությունն է»[2]։

Ավելի կոնկրետացնելով իր մտքերը հողը աշխատավոր գյուղացուն հանձնելու մասին, Նալբանդյանը գրում էր.

«Հողը պատկանում է հասարակության, որի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վերա, հավիտյանս ժամանակների և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, իսկ մյուս կողմից առանց արգելքի հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի պահելով». և եթե այդպես լինի, «անհնար է, որ նա կամ աղքատության հանդիպի, կամ իսպառ կարոտ մնա»[3]։

Սվաճյանը այս հարցում ևս միանում է իր ուսուցչին, և գտնում, որ «հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի իրավունք մ' է և այն հասարակությունը, որուն անդամները զայն գործելու հետամուտ են, իրենց և իրենց սերնդյան կյանքը և ապագան կհաստատեն մեկ ամուր և ապահով հիման մը վրա, և անհնար է, որ կամ աղքատության հանդիպին, կամ իսպառ կարոտ մնան»[4]։

Ընդունելով հանդերձ, որ հողը օգտագործելու իրավունքը անկողոպտելի է, հետևաբար հավասարապես իրավունք ունեն բոլոր մարդիկ, Սվաճյանը զգուշանում է մասնավոր սեփականության մասին խոսելուց և հողը ռևոլյուցիոն ճանապարհով ձեռք բերելու հարցը բարձրացնելուց։ Դրա փոխարեն նա առաջ է քաշում ընկերություններ կազմելու և այդ ձևով հողը գնելու, հասարակության սեփականությունը դարձնելու ուտոպիկ միջոցը։ Մեր կարծիքով Սվաճյանի այդ առաջարկը մասամբ էլ արդյունք էր այն խստագույն հետապնդումների, որի մեջ նա գրում էր այդ տողերը։

Նալբանդյանը «Երկրագործության» մեջ մանրամասն վերլուծման ենթարկելով Թյուրքիայի տնտեսության հետամնացության պատճառները, ցույց էր տալիս, որ ղեկավար շրջանները երկիրը դրել են կախման մեջ եվրոպական պետություններից, որոնք նրան թելադրում են իրենց պահանջները։ Թյուրքիան դարձել էր միայն հումքի աղբյուր, այդ հումքի մշակությունը, վաճառքն

[1] Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր։ էջ 407։
[2] «Մեղու», 1862 № 165։
[3] Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր։ էջ 411։
[4] «Մեղու», 1862, № 165։

իր ձեռքն էր վերցրել եվրոպական կապիտալը։ Իսպառ բացակայում էր տեղական արդյունաբերությունը։

«Երեք ու կես նավ՝ բացի ծովագնացությունից ուրիշ ամեն բանի պիտանի, մի քանի հազար քաղցած և մերկ զինվոր, որ տարիներով չեն տեսնում ոռճիկի երես, ներս մտնող ապրանքների մաքսն աննշան, յուր մեջ պատրաստված ապրանքի վերա ավելի ծանր հարկ, ոչ երկրագործություն, ոչ ճանապարհ, ոչ հաղորդակցություն, ոչ գիտություն և ոչ արվեստ»[1]։

Այս էր Թյուրքիայի տնտեսության պատկերը։ Արդյունքը լինում էր այն, որ առօրյա օգտագործման ամենամանր ապրանքներից սկսած, վերջացրած մանուֆակտուրայով ու մեքենաներով, ներմուծվում էին եվրոպական երկրներից, վաճառվում թանկ գներով՝ քամելով աշխատավոր ժողովրդի վերջին հնարավորությունները։

Եվրոպական պետությունների հետ առևտրական գործարքներով կապված հայ բուրժուազիան, որ իր ձեռքն էր վերցրել երկրի հումքի արտահանման և եվրոպական երկրներում պատրաստվող ապրանքների ներմուծման խոշոր բաժինը, ամենևին շահագրգռված չէր տեղական արդյունաբերության զարգացմամբ։ Աննշան թիվ էին կազմում այն մարդիկ, որոնք ծառանում էին այդ երևույթի դեմ և պահանջում զարկ տալ արդյունաբերությանը։

Սվաճյանը, հետևելով Նալբանդյանին, սուր քննադատության է ենթարկում երկրի էկոնոմիկական քայքայող այդ երևույթի դեմ և պահանջում է զարկ տալ երկրագործությանը, ստացված արդյունքը մշակել և հանձնել ազգային վաճառականությանը։

Թյուրքիայում, գրում էր նա, «այսօր թող ամեն հայ ոտքի ամանեն մինչև գլուխին սանտրը գնեն ու պիտի տեսնե, որ եվրոպական ձեռագործ է և մեր վաճառական ճանաչածնիս ալ ուրիշ բաներ չեն, բայց միայն եվրոպական ձեռագործներու սպառմանը միջնորդներ են, ըսել է որ եվրոպական ձեռագործներե կամ արհեստներե կքաղենք մեր հացը, և թե ինչ աստիճան նեղությամբ և չարչարվելով, ինչ աստիճան սրտի տագնապներով և հոգերով, անիկա նույն վիճակին մեջ եղողներուն կթողունք բացատրել»[2]։

Այսպիսով՝ Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության բարձրացրած հարցերին առաջինն անդրադարձավ անվանի հրապարակախոս Հ. Սվաճյանը «Մեղվի» վերոհիշյալ առաջնորդողում, քննության առնելով սոցիալական, քաղաքական և իրավական մի շարք հարցեր, այդ թվում երկրագործության զարգացման, հողի ազատ օգտագործման, տեղական արդյունաբերության ու խոշոր վաճառականության զարգացման հարցերը։

Ինչ խոսք, որ Սվաճյանը հնարավորություն չուներ մի առաջնորդողում արձագանքելու այն բոլոր հարցերին, որ բարձրացնում էր «Երկրագործության» մեջ Մ. Նալբանդյանը։ Հավանաբար նա նպատակ ուներ պարբերաբար անդրադառնալու Նալբանդյանի առաջ քաշած մյուս խնդիրներին, սակայն քաղաքական մի շատ կարևոր առաջադրանք, որը ըստ երևույթին գալիս էր Նալբանդյանից, հարկադրում է նրան ընդհատել խմբագրի պաշտոնը և հեռանալ Պոլսից։

1862 թ. ամռանը, երբ Սվաճյանն իր ձեռքին ուներ ռևոլյուցիոն գործունեության այնպիսի փայլուն ծրագրեր, ինչպիսիք էին Մ. Նալբանդյանի «Երկրագ-

[1] Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 428։
[2] «Մեղու», 1862, № 165։

տող» և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունները, հանկարծ անհայտանում է Պոլսից, «Մեղվի» խմբագրությունը թողնելով իր հավատարիմ ընկերներին։ Սվաճյանը Պոլսից բացակայել է աննկատելի։ Ըստ երևույթին, այդ բացակայության բուն նպատակների մասին իմացել են սահմանափակ թվով մարդիկ միայն։ Այդ է վկայում նրա բացակայությունից ուղիղ մեկ տարի անց լույս տեսած «Մեչուխեչային նոր դուժերը» առաջնորդող հոդվածը, որտեղ խոսվում է ընթերցողների հետաքրքրության մասին, թե որտեղ է «Մեղվի» խմբագիրը և որոշ տեղեկություններ են տրվում նրա այցելած քաղաքների մասին։ Բանից պարզվում է, որ Սվաճյանը եղել է Հայաստանի ամենահայաշատ վայրերում, այդ թվում՝ Վանում, Մուշում, Սեբաստիայում, Մարզվանում և այլ մաղամներում, ինչպես և գաղութահայերի մեջ։

Ինչ նպատակով է կատարել նա այս մեծ շրջագայությունը, որ անշուշտ մի պարզ զբոսանքի բնույթ չէր կրում և պահանջում էր նյութական մեծ զոհողություններ։ Համենայն դեպս, եթե նպատակը լիներ մի սովորական հարց, կամ առօրյա աշխատանքի կարգավորում, այն ամբողջ մեկ տարի գաղտնի չէր պահվի ընթերցողներից։

Սվաճյանը 1863 թ. նոյեմբեր ամսին վերադառնում է Պոլիս, 1864 թ. հունվար ամսին նորից անհայտանում է։ Այս ամբողջ ժամանակամիջոցում, անգամ այն ամիսներին, որ նա եղել է Պոլսում, չի ստորագրել «Մեղուն», սակայն հրապարակով հայտնել է, որ ինքը պատասխանատու է «Մեղվի» նյութերի համար։

Հարություն Սվաճյանի այս խորհրդավոր շրջագայությունները մեր կարծիքով անմիջապես առնչվում են Նալբանդյանի գլխավորած ռևոլյուցիոն շարժման ծավալման հետ։ Ընկ. Ա. Մակարյանն իր «Մ. Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան» աշխատության մեջ, անդրադառնալով Սվաճյանի երկրորդ՝ 1864 թ. ուղևորությանը, կատարում է մի ուշագրավ, բայց դեռևս ճշտման կարոտ ենթադրություն, թե Սվաճյանի նպատակն է եղել այցելել Պետրոպավլովսկում բանտարկված իր ուսուցչին՝ Մ. Նալբանդյանին[1]։ Որպես միակ հավաստի փաստ նա հիշատակում է Նալբանդյանի «Ուղերձ առ Մեչուխեչայ» ոտանավորը, որ Նալբանդյանը գրել է նույն ժամանակամիջոցում և տպագրված է «Հյուսիսափայլ»-ում։

Ենթադրությունն ուշադրության արժանի է, բայց քիչ համոզիչ։ Վերոհիշյալ բանաստեղծությունը Նալբանդյանը կարող էր գրել անկախ նման հանդամանքից, բայց ենթադրենք, թե 1864 թ. ուղևորության նպատակն այդ էր, իսկ նախորդ մեկ տարվա ընթացքում ինչով է զբաղվել։ Ավելի հավանական է ենթադրել, որ նրա նպատակն էր Նալբանդյանի առաջարկով հայ իրականության մեջ ստեղծել գաղտնի կազմակերպություններ, որոնցից մի մասը գուցե և թաքնված լիներին լեգալ ցուցանակների տակ։ Նման ենթադրությունն իմաստավորում է նաև ընկ. Մակարյանի առաջ քաշած հարցը, այն, որ Սվաճյանը ոչ թե պարզապես ուզեցել է այցելել իր ուսուցչին, այլ ցանկացել է նրան զեկուցել այն աշխատանքների մասին, որ կատարել էր նախորդ տարում։ Այցելությունը հաջողվել է, թե ոչ, հայտնի չէ։

[1] Ա. Մակարյան. Մ. Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան, Երևան, 1946, էջ 163 – 169։

Հենց նույն ժամանակաշրջանին է վերաբերում գավառական մի շարք լեգալ կազմակերպությունների ստեղծումը։

Մամուլում հրապարակված շատ ցաք ու ցրիվ տեղեկություններից երևվում է, որ այդ ամիսներին գավառական որոշ քաղաքներում, որտեղ եղել է Սվաճյանը, հիմնադրվել են ընկերություններ, մեծ մասամբ աշխատավորական կազմակերպություններ։ Ինչ խոսք, որ անլեգալ կազմակերպությունների մասին չէր կարող գրվել ազատ կերպով և ժամանակի մամուլում այդ մասին ոչինչ չլինելը չի վկայում նման կազմակերպությունների բացակայության մասին, սակայն լեգալ բնույթ ունեցող կազմակերպությունների մասին տպված ժլատ տողերից էլ երևում է, որ Մ. Նալբանդյանի գաղափարները վճռական դեր էին կատարում հայ երիտասարդության մեջ։ Հ. Սվաճյանի դերը այս հարցում բացառիկ մեծ է և կարոտ լուրջ ուսումնասիրության։

Փարիզում հրատարակված «Փարիզ» թերթի էջերում մենք հանդիպում ենք մի բանի ուշագրավ փաստերի։

Օրինակ, Ակնից այդ օրերից Քյուրքչիանոֆին հասցեագրված մի նամակում ասվում է, որ այնտեղ հիմնադրվել է մի կազմակերպություն, գերազանցապես բաղկացած արհեստավորներից։ Նամակագիրը ընկերության նպատակները մանրամասնորեն չի շարադրում, խոսում է նրա կրթական նպատակների մասին, նշելով, որ «անոնցմե զատ կանոններ ալ» ունին, որոնց մասին գրելը «երկան կուգա», պարզվում է միայն, որ այդ «Ազգասիրական ընկերությունը» «արհեստավոր եղբայրներից» բաղկացած ընկերություն մ' է»[1]։

Մի այլ քաղաքից՝ Կեսարիայից ստացված նամակում խոսվում է ռեակցիայի դեմ մղվող պայքարի մասին, հավաստիացվում, որ իրենք անդավաճան կշարունակեն պայքարը, որովհետև իրենց նշանաբանն է Նալբանդյանի կոչը։

«Մեր բնաբանը «Երկու տող» տետրակին բնաբանն է, «Թող որոտա մեր գլխոյն» և այլն[2]։

Խարբերդից նույն 1863 թ. մի երիտասարդ գրում է. «Մեղուն» ալ կրստանանք, բայց ընդոր կցավենք պրն. Նալբանդյանի վրա»։

Որ սուլթանական կառավարությունն իմացել է նման կազմակերպությունների գաղտնի նպատակների մասին, պայքարել դրանց դեմ հայ ռեակցիոն հոսանքի օժանդակությամբ, այդ ամեն կասկածից վեր է։ Մի փաստ, սակայն, վկայում է, որ սուլթանական կառավարությունն իր լրտեսների միջոցով իմացել է նաև Սվաճյանի գործունեության մասին և նրան առել կասկածի տակ։

Այդ փաստը հետևյալն է.

«Մեղվի» 1863 թ. հոկտ. 8-ի համարում լույս է տեսել «Մեչուխեչայի տեսիլքը օր մը պիտի լուծվի» վերնագրով մի առաջնորդող, որտեղ ասվում է.

«Անցյալ օր Մեչուխեչայն՝ երբ Վանի մեջի գործված չարիքները զննելեն և Մոլտավաքիայի հայ ժողովրդյան իրարանցումը աչքե անցունելե ետ կդառնար, ու երբ ձեռքը նամակներու ծրար մի բռնած Ադրիանապոլսի ճամբով կուգա Պոլիս կմտնե, անմիջապես զանի ցամաքի մամասատունեն կարգիլեն ձեռքի ծրարին մեջ մամսի վերաբերյալ բանկագին բաներ ըլլալ կարծելով»[3]: (Ընդգծումը մերն է.— Գ. Ստ.)։

Եթե կատարվածը մաքսատների համար սովորական մի երևույթ լիներ,

[1] «Փարիզ», 1863, № 67
[2] «Փարիզ», 1863, № 83,
[3] «Մեղու», 1862, № 163,

Սվաճյանը չէր գրի առաջնորդող հոդվածում, այն էլ այդքան իրոնիկ ոճով։ Կնշանակի Սվաճյանի բերած նամակների ծրարը հատուկ կասկածի տեղիք է տվել։ Թե արդյունքը ինչ է եղել, հայտնի չէ։ Նալբանդյանի շնորհիվ կոնսպիրատիվ աշխատանքի հմտացած Սվաճյանը, հասկանալի է, որ հեշտ կերպով օձիքը ձեռք չէր տա։

Փաստ է, սուլթանական կառավարությանը և նրա կամակատար հայ էֆենդիներին ու Տերոյենցի նման ծախված մարդկանց հայտնի էր Սվաճյանի ռևոլյուցիոն աշխատանքը գավառում։ Եվ նրանք չէին կարող լուռ մնալ, ինչպես մենք այդ կտեսնենք իր տեղում։

* *

Սվաճյանի բացակայության ժամանակ նրա սկսած գործը փորձեցին շարունակել «Մեղվի» շուրջ համախմբված այլ դեմոկրատ գրողներ ու հրապարակախոսներ։

Այդ տեսակետից ուշադրության արժանի է Արմենակ Հայկունու աշխատանքը։ Նա մինչև 1861 թ. եղել է լիբերալ տատանումներով մի գրող, հեղինակ «Էլիզա» վերնագրով մի սանտիմենտալ և թույլ վեպի, դրամատիկական արժեքից զուրկ մի քանի պիեսների, որոնցից մեկն է միայն արժանացել բեմադրվելու բախտին։

Հայկունին, սակայն, 1861 թ. անձամբ ծանոթանալով Մ. Նալբանդյանի հետ և ուսումնասիրելով նրա ստեղծագործությունները, շեշտակի շրջադարձ է կատարում դեպի դեմոկրատական դիրքերը, մտերմանում Հ. Սվաճյանի հետ, «Պեգասյան թռչնիկ» պարբերականում (1863 թ.), պայքար մղում Նալբանդյանի գաղափարների պաշտպանության համար, 1864 թ. դառնում Սվաճյանի «Մեղվի» խմբագիրը, իսկ 1865 թ. հրատարակում է «Ձայն ընկերասիրական» պարբերականը, որը «Մեղվի» հետ միասին՝ ռեակցիոն հոսանքի կողմից համարվել է հերետիկոսական մի հրատարակություն և բանադրվել եկեղեցու կողմից։ Արմենակ Հայկունու դեմ սկսված տմարդի հալածանքն ու հետապնդումը նրան գցում են նյութական ծայր աստիճան ծանր վիճակի մեջ։ Նա մեռնում է 1866 թ. ամենաթշվառ ու լքված վիճակում, այն համոզմունքը շուրթերին, թե ապագան միայն ցույց պիտի տա իր գաղափարների ճշտությունը։

Ահա այս մարդն է, որ Սվաճյանից հետո փորձում է անդրադառնալ «Երկրագործության» մեջ արծարծվող մի շարք հարցերի։

Մեր տրամադրության տակ չկա Հայկունու կյանքի վերջին տարիներին հրատարակված «Ձայն ընկերասիրական» պարբերականը, որտեղ նա առավել համարձակ ընդվզումներ է ունեցել ռեակցիոն գաղափարախոսության դեմ, և հայտնի չէ, թե նրա այդ շրջանի հրապարակախոսության մեջ տնտեսական, սոցիալական պայքարը որքան տեղ է բռնել։

Մի բան պարզ է՝ հոգևորականների, առհասարակ կրոնի քննադատության ընդգավառում նա կանգնած է Նալբանդյանի և Սվաճյանի կողքին, և փիլիսոփայական մի շարք հարցերում, հատկապես մարդու առաջացման, տիեզերքի ստեղծման, հանդերձյալ կյանքի վերաբերյալ իդեալիստական-քրիստոնեական մեկնաբանության քննադատության հարցերում նրա բերած փաստարկումները հիշեցնում են Նալբանդյանի համապատասխան մտքերը։

Հայկունին 1863 թ. «Պեղասյան թռչնիկ» պարբերականի էջերում խանգավառ տողերով ավետելով իր ընթերցողներին Մ. Նալբանդյանի կարծեցյալ ազատությունը բանտից, հրատարակելով եզոպոսյան լեզվով գրված ոտանավորներ Նալբանդյանի մասին,[1] սկսում է մի ամբողջ հարձակում կրոնի դեմ, կասկածի տակ առնելով հանդերձյալ կյանքի գոյությունը։

Նա, անդրադառնալով այն հարցին, թե կրոնի և կրոնավորների դարն անցել է, համարձակ մերկացումներով հրապարակի վրա է դնում հոգևորականության նողկալի արարքները, նրանց շահատակությունները և պահանջում վերջ տալ այդ բոլորին, միաժամանակ ափսոսալով, որ «դեռ ժամանակը հասած չէ ամեն բան բաց և որոշ խոսելու»[2]։

Նա շատ զգույշ կերպով իր ընթերցողներին բացատրում է, որ մարդկային երջանկությունը ոչ թե պետք է փնտրել երկնքում, այլ երկրագնդի վրա և պետք է պայքարել այդ երջանկության համար, թե հանդերձյալ կյանքի վրա հույս դնելով անհնար է ապահովել մարդու տնտեսական պահանջները։

«Պեղասյան թռչնիկում» Հայկունին դրում է «Ամուսնական» վերնագրով մի հոդված, որտեղ կասկածի տակ առնելով մահից հետո մի այլ կյանքի գոյությունը, խորհուրդ է տալիս ընթերցողներին մտածել այն միջոցների մասին, որոնք «այս աշխարհիս մեջ մեր անցնելիք օրերուն համար օգուտ մը» ունին և «կրնան հոս մեզ երջանիկ ընել»[3]։

Այս հոդվածը բորբոքում է ռեակցիոն դաղափարախոսների կրքերը։ Ստ. Փափազյանի «Ժամանակը», որին Նալբանդյանը համարում էր ռեակցիոն «Երևակի» ճուտը, Հայկունուն համարում է այն մարդկանցից, որոնք «անդադար կմարտնչին աստուծո և եկեղեցվույն դեմ»։ Փափազյանը փորձում է խելքի բերել «մոլորված» Հայկունուն, բայց Հայկունին նրան բանավոր պատասխանում է, թե ափսոսում է, որ չի կարողանում մամուլում «համարձակ իր սկզբունքները հրատարակել» և պայքարել մի այնպիսի նախապաշարմունքի դեմ, որը «հավիտենականության ցնորքով մը երկրիս մեջ զանազան երանություններ և երջանկություններ վայելելէ»[4] զրկում է մարդուս։ Հայկունու դեմ նույնպիսի հարձակումներ է սկսում «Երևակը», նրան համարելով մոլորված մի հերետիկոս։ Հայկունին ոչ միայն չի վախենում պայքարելուց, այլ հրապարակում է երկու բրոշյուր «Գաղտնիք կղերականության» և «Ճերմակ կամ պ. Փափազյան» վերնագրով։

Առաջինի մեջ, որը արժանացավ եկեղեցու բանադրանքին, խիստ քննադատության է ենթարկում հոգևորականներին և հրապարակի վրա դնում նրանց այլանդակ բարքերը, իսկ երկրորդի մեջ՝ ցույց տալով Ստ. Փափազյանի տգիտությունը և նրա ռեակցիոն դաղափարների հակաժողովրդական էությունը, շարադրում է· իր տեսակետները՝ կրոնի և բարոյականության մասին, հանդելով այն եզրակացության, որ «Մարդկային բարոյականությունը երբեք ծագումն առած չէ կրոնքեն»[5]։

Ա. Հայկունին, նույն «Պեղասյան թռչնիկ»-ի էջերից փորձում է անդրա-

---

[1] Տես մեր «Մ. Նալբանդյանի երկրորդ ուղեորության հետ կապված մի քանի հարցեր» հոդվածը· «Տեղեկագիր» 1949, № 9։

[2] «Պեղասյան թռչնիկ», 1863, № 9։

[3] «Պեղասյան թռչնիկ», 1863, № 16։

[4] «Ժամանակ», 1863, № 16։

[5] Ա. Հայկունի, Ճերմակ կամ Պ. Փափազյան և իր ժամանակը, Կ. Պոլիս։ 1863, էջ 3։

դառնալ նաև Նալբանդյանի բարձրացրած սոցիալական հարցին, աշխատավոր ժողովրդի նյութական վիճակի բարելավման հարցին։

Դժբախտաբար Հայկունու մոտ անհամեմատ ավելի զգույշ է այդ հարցի արծարծումը, քան Սվաճյանի մոտ, սակայն մի բան որոշակի է, Սվաճյանի նման Հայկունին էլ հայ ժողովրդի փրկության գործը երկնքից ցած իջեցնելով, կապում է տնտեսական պրոբլեմի հետ, անմիջապես հողի հետ և պաշտպանում Նալբանդյանի այն թեզը, թե տնտեսական հարցի լուծման միակ ուղին երկրագործությունն է, այնպիսի երկրագործությունը, «որը անվարձ չթողու երկրագործը»։

«Պեգասյան թռչնիկում», սուր քննադատության ենթարկելով հայ հոգևորականներին ու հարուստներին, և անդրադառնալով ժողովրդի նյութական վիճակի բարելավման հարցին, նա գրում է հետևյալ տողերը.

«Հարստության առաջին միջոցը երկրագործությունն է. իսկ օրեց-օր աղքատության մեջ ընկղմելու համար բավական է, որ ժողովուրդը անտեղյակ լինի երկրագործության»[1]։

III

Այն օրերին, երբ «Երկրագործության» մեջ առաջ քաշվող հարցերի շուրջ սկսված մտքերի փոխանակությունը, Սվաճյանի բացակայության պատճառով դադարում է «Մեղվի» և պրոգրեսիվ մամուլի էջերում, և շարունակվում է անլեգալ ճանապարհով, նույն այդ օրերին լիբերալ մամուլում և հրատարակություններում բորբոքվում է մի բանավեճ՝ կապված Նալբանդյանի բարձրացրած հարցերի հետ։

Լիբերալները չէին փորձում շոշափել քաղաքական ազատության հարցը առհասարակ, իսկ սոցիալական հարցի բարձրացման խնդրում, դեմ չէին գնում աշխատավորությանը բարեգործության ճանապարհով օգնություն ցույց տալու պահանջներից։

Հայ բուրժուազիայի իդեոլոգները, առանց ուղղակի հարձակումներ գործելու Նալբանդյանի վրա, անուղղակի ճանապարհով քննադատում են նրա ռեվոլյուցիոն գաղափարները՝ հակադրելով իրենց ռեֆորմիզմը։

Նալբանդյանի «Երկրագործության» բարձրացրած հարցերին անդրադառնում են մի շարք մարդիկ։ Մենք դրանցից վերցնենք ամենից ականավորներին՝ պատմաբան Հ. Վարդանյանին, և տնտեսագետներ Հ. Ջրաստունյանին ու Պառնասյանին։ Սրանք բոլորն էլ իրենց ուսումը ստացել են Եվրոպայում, առաջինը Վիեննայում, մյուս երկուսը՝ Ֆրանսիայում։

Ժամանակի ականավոր լիբերալ-հրապարակախոս Հ. Վարդանյանը 1863 թվականին հրատարակում է «Սահմանադրական ճշմարտություններ» վերնագրով մի գիրք, որի մեջ շոշափվող հարցերը սերտ կերպով կապվում են «Երկրագործության» մեջ առաջ քաշվող հարցերից մի քանիսի հետ։

Մենք արդեն տեսանք, որ «Երկրագործությունը» ուղղված էր նաև հայ լիբերալիզմի դեմ, մասնավորապես արևմտահայ լիբերալների, որոնք համախմբված «Բարեգործականի» շուրջը, գովերգում էին ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիան, նրա գաղափարները համարելով մարդկության փրկության վերջին խոսքը, այդ ռևոլյուցիայի ստեղծած հասարակարգը՝ իդեալ հասարակարգ։

[1] «Պեգասյան Թռչնիկ», 1863 № 9։

Հ. Վարդանյանը «Բարեգործականի» հիմնադիր անդամներից էր։[1] հեղինակ՝ ֆրանսիական ռևոլյուցիային նվիրված ստվարահատոր աշխատությունների։ Բնականաբար նա պիտի իր խոսքն ասեր մի այնպիսի աշխատության մասին, որտեղ այնքան խիստ քննադատության էր ենթարկվում ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիան, նրա «ազատություն, հավասարություն, եղբայրություն» լոզունգները հռչակվում էին խաբեբայական խոսքեր։

Վարդանյանը, առանց Նալբանդյանի հետ ուղղակի բանավեճի մեջ մտնելու, գովաբանում է լիբերալ բուրժուազիայի որդեգրած այդ դեկլարացիաները, չմտահոգվելով այն բանով, թե որքանով են կենսագործվում այդ գեղեցիկ խոստումները։

Վարդանյանի աշխատությունը մի քանի տեսակետից ուշագրավ է։ Ցնցած այն հանգամանքին, որ այսպես կոչված «Ազգային սահմանադրության» շուրջ ստեղծված վիթխարի գրականության մեջ հողի, ագրարային հարցի մասին համարյա ոչինչ չկա, Վարդանյանը հատուկ գլուխ է հատկացնում այդ խնդրին և մեր կարծիքով հատկացնում է այն պատճառով, որ արդեն հրապարակի վրա էր դրված Նալբանդյանի առաջ քաշած հարցերի քննարկումը։ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության հիմնական դրույթները ոչ միայն մամուլում, այլև հասարակական կյանքում քննարկվում էին, առաջացնում մտքերի աշխույժ փոխանակություն։ Նա ուշագրավ մտքեր է արծարծում վերոհիշյալ աշխատության մեջ սոցիալական, քաղաքական ազատության և այլ հարցերի մասին։ Օրինակ, նա հասկանում է, որ «Ժողովուրդը բավական ժամանակ հարստահարվելեն ետքը, երբ կտեսնե, որ պատիժը կմշտնջենավորի, այնժամ միայն կսթափի և իր կացությունը կրավորականեն ի ներգործական կփոխե, որով փոխանակ պատժյալ ըլլալու, կըլլա պատժող և այն ձեռը, որ բազով զմանը կպատժե, մանով ալ բազը կը պատժե»[3]։ (Ընդգծումը մերն է— Գ. Ստ.)։

Իհարկե, Վարդանյանն ամենևին համակարծիք չէ, որպեսզի ժողովուրդը մանով պատժի թագը, նա դիմում է կոմպրոմիսի, քարոզում է կանխել նման անախորժությունները։ Բայց չպետք է ժխտել, որ նրա մոտ նկատելի են բուրժուական, իր ժամանակի համար պրոգրեսիվ, նման հարցադրումներ, օրինակ՝ այն, որ «Իշխանությունն ազգին իրավունքն է և ոչ թագավորի մը կամ ցեղի մը և կամ ուրիշ անհատի մը։ Ուստի ազգի իշխանը նույնիսկ ազգն է»[4]։

Նալբանդյանը «Երկրագործության» մեջ, անդրադառնալով ազգության հարցին, զարգացնում էր այն միտքը, որ ազգությունը պատմական կատեգորիա է, հավերժական չէ, և և որ «մեր ամենիս պարտքն է մինչև այն ժամանակ մնալ ազգության դրոշի տակ, որքան ուրիշը կրում է յուր սեփական ազգության դրոշը»[5]։

---

[1] Տես «Կռունկ Հայոց աշխարհի», 1862, № 8, էջ 622։

[2] Մ. Նալբանդյանի ծոցատետրում արտագրված է «Մասիս» թերթում լույս տեսած հայտարարությունը «Սահմանադրական ճշմարտություններ» գրքի լույս ընծայման մասին։ Արդյոք Նալբանդյանին հայտնի եղել է, որ այդ գրքում շոշափվում են իր առաջ քաշած հարցերը, թե սոսկ հետաքրքրության համար է արտագրել, դժվար է ասել։ Նալբանդյանը բանտում մոտիկից հետևում էր արևմտահայ կյանքում կատարվող դեպքերին և հնարավոր է, որ իմանար այդ գրքի բովանդակության մասին։

[3] Հ. Վարդանյան, Սահմանադրական ճշմարտություններ, կ. Պոլիս, 1863, էջ 6։

[4] Նույն տեղում։

[5] Ս. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 443։

Հ. Վարդանյանը, առանց որևէ արմատական եզրակացության հանգելու, ուշագրավ ձևով է բացատրում այս հարցը։ Նա այն կարծիքն է զարգացնում, որ ազգերը աստիճանաբար կարող են միաձուլվել և որ մինչև այդ յուրաքանչյուր ազգ պետք է պահպանի իր գոյությունը։

Նա գրում է. «Մինչև որ մարդկությունը իր ընդհանրական ազգության սահմանը հասած չէ, մինչև որ ազգ բառը չէ թե բոլոր մարդկային սեռը, այլ լեզվով, կրոնքով, ու սովորությամբ զատված ժողովուրդ մը կնշանակե, ազգի մը նորոգության ժամանակ իր ներքին հանդամանացը մտադրությունը և միայն այս մտադրությունը կրնա առաջնորդել ի հաջողություն, որովհետև միայն այս է բնության ճամփան»[1]։

Ազգության պատմական կատեգորիա լինելու թեզը պրոգրեսիվ այնպիսի մի թեզ է, որին մենք չենք հանդիպում XVIII դարի ֆրանսիական մատերիալիստների մոտ, որոնց աշխատություններին մոտիկից ծանոթ էր Վարդանյանը։ Այդ հարցադրումը հավանաբար գալիս էր Նալբանդյանից։ Վարդանյանը ցանկանում էր այն օգտագործել իր տեսակետները հիմնավորելու համար։ Օրինակ, մինչդեռ Նալբանդյանն ազգության ինքնուրույնության հարցը օրդանապես կապում է եվրոպական պետությունների գաղութային քաղաքականության քննադատության հետ, պահանջելով. որ ամեն մի ժողովուրդ իրավունք ունենա ինքը տնօրինելու իր բախտը, Վարդանյանն այդ փաստի կողքով է անցնում, նրա մոտ ակնարկ անդամ չկա ազգային ճնշման վերացման մասին։

Այս բոլորով հանդերձ, Վարդանյանի վերոհիշյալ տողերը ուշագրավ են և վկայում են Նալբանդյանի «Երկրագործության» թողած ուժեղ ազդեցության մասին հենց այդ գրքի լույս ընծայման ամիսներին, ազդեցություն, որը յուրահատուկ ձևով իր արտահայտությունն է գտել նաև լիբերալ հրատարակություններում։

Այսպիսի բավականաչափ առաջադիմական գաղափարներ արծարծող Վարդանյանը, փորձում է առաջ քաշել նաև երկրագործության հարցը։ Պատասխանելով այդ թվերին շատ շատերին զբաղեցնող այն հիմնական հարցին. թե ժողովուրդը ինչ ճանապարհով կարող է հարստանալ, նա գտնում է, որ ժողովրդի հարստության համար կա երեք ճանապարհ՝ երկրագործություն. արդյունաբերություն և վաճառականություն։ Վարդանյանն էլ հանգում է այն եզրակացության, որ դրանց մեջ միակ ուղիղ ճանապարհը երկրագործությունն է։

«Այս երեք ճամփայեն,— գրում է նա,— ազգին համար ամենեն կարևոր երկրագործությունը կը սեպեմ»[2]։

Օգտագործելով երկրագործությանն առաջնություն տալու այդ թեզը, Վարդանյանն արդեն միանգամայն տարբեր եզրակացության է հանգում, քան Նալբանդյանն ու Սվաճյանը։ Նրա կարծիքով հայ գյուղացին չպետք է զարկ տա դյուղական աշխատանքի մեքենայացմանը, որը, ըստ նրա, կարող է դուռ բացանել անդործության, գործազրկության։ Նա առաջարկում է, որ գյուղացին «իր գիտցածին պես հերկե, ցանե ու քաղե»։ Մյուս կողմից, դեմ չէ կալվածատիրական սեփականատիրությանը. միայն առաջարկում է, որ կալվածատերերը լինեն հոդատար ու «դնող, պահանջում է «Երկրագործությունը վաշ-

[1] Հ. Վարդանյան, Սահմանագրական ճշմարտություններ. էջ 33։
[2] Նույն տեղում. էջ 73։

խե ազատել և չթողուլ, որ երկրագործի մը քրտանց արդյունքեն մեկը իրեն գա և քսանը վաշխառուին երթա»[1]։

Աշխատանքի մեկ տոկոսը միայն գյուղացուն մնալու, իսկ քսանը վաշխառուին գնալու փաստը, չնայած անհանգստացնում է Վարդանյանին, սակայն նա շատ օրինավոր է համարում կալվածատիրոջ և գյուղացու փոխհարաբերությունը, և որ ամենից կարևորն է՝ նրա կարծիքով ամեն ինչ լուծելու է ժամանակը։ Որևէ բռնի ուժ, խլրտում անհաճո է և անիմաստ։ Նա կողմնակից է էվոլյուցիոն զարգացմանը և դատապարտում է ռևոլյուցիոն անցումները։

Որոշակի կերպով երևում է Հովսեփ Վարդանյանի սարսափը դասակարգային պայքարից, մի բան, որ կաղմում էր Նալբանդյանի «Երկրագործության» մեջ բարձրացվող հիմնական հարցերից մեկը։ Վարդանյանի ամբողջ գրքի նպատակն այն է, որ հասարակության մեջ երկպառակություններ չլինեն։ Եթե նա ֆրանսիական ռևոլյուցիայի, XVIII դարի ֆրանսիական մատերիալիստների գնահատման հարցում տարբեր է լիբերալ Ստ. Նազարյանից և պաշտպանում է ֆրանսիական առաջավոր գաղափարախոսությունը, ապա սոցիալական հարցում ամբողջովին կանգնած է Նազարյանցի կողքին և գրում է.

«Ո՜հ, ինչ գեղեցիկ ապագա մը հայրենյաց համար, երբ ազգը առանց ներքին դղրդյուններու ու սասանություններու, առանց բռնության և առանց հուզման հանդարտաքայլ, բայց ամբողջ, անվնաս և առույգ կհասնի իր երջանկության նպատակը և ըսել կուտա իրեն համար, հայ է, ուրեմն երջանիկ է»[2]։

Հ. Վարդանյանի գրքի լույս ընծայումից անմիջապես հետո, նույն 1863 թ. վերոհիշյալ բանավեճին մասնակցում են Հ. Ջրասունյանը և Վ. Պառնասյանը, «Մասիսի» էջերում գրելով ընդարձակ հոդվածաշարքեր՝ «Տնտեսական» ընդհանուր վերնագրով։ Այդ երկու հոդվածաշարքերի մեջ ամենից առաջ երևվում է հեղինակների բավականաչափ լավ իրազեկությունը նախամարքսյան բուրժուական տնտեսագիտական մտքին։ Նրանք լավ ծանոթ են Ադամ Սմիտին, Ջոն Ստուարտ Միլլին և ուրիշ տնտեսագետների։ Ոչ միայն հիշատակում են դրանց անունները, այլև ընդարձակ մեջբերումներ են կատարում։ Ծանոթ են նաև ուտոպիստ սոցիալիստներ Սեն Սիմոնին, Շառլ Ֆուրյեին։

Այս ամբողջ տնտեսագիտական բագաժով զինված, նրանք մտնում են պայքարի ասպարեզ և փորձում հասարակության ներկայացնել իրենց առաջարկները երկրագործության զարգացման մասին։

Վերոհիշյալ երկու տնտեսագետները շատ զգույշ փորձում են քննադատել հողի օգտագործման Նալբանդյանական թեզը, պաշտպանելով հողի մասնավոր սեփականության սկզբունքը, սեփականության անձեռնմխելիության օրենքը։

Եթե Հովսեփ Վարդանյանը Նալբանդյանի հետ անուղղակի կերպով բանավեճի մեջ էր մտնում և երկրագործությանն առաջնություն տալով, ըստ էության կարգացնում էր լիբերալ տեսակետներ, ապա Հ. Ջրասունյանն իր թեզը շարադրելիս. առերևույթ հենվում է Նալբանդյանի վրա. ավելին, նա երկրագործությանն առաջնություն տալու իր միտքը կառուցում է Մ. Նալբանդյանի գրքի վերնագրի համապատասխան և գրում է. «Ուրեմն երկրագործությունը է աղգի մը վիճակին բարվոքման ու... ուղիղ ճանապարհը»[3]։

Թե՛ վերոհիշյալ ամբողջ նախադասությունը և թե՛ ուղիղ բառից առաջ

---

[1] Հ. Վարդանյան. Մանմանագրական ճշմարտություններ, էջ 76։
[2] Նույն տեղում, էջ 46։
[3] «Մասիս», 1863, № 616։

դրված կախման կետերը, ամբողջովին մատնում են հեղինակի նպատակը՝ Նալբանդյանի գրքի վերնագիրն օգտագործել իր տնտեսագիտական սկզբունքների տարածման համար։ Սակայն Ջրասունյանի մոտ դա միայն արտաքին կողմ է։ Հետագա շարադրանքի մեջ նա հանգում է միանգամայն այլ եզրակացությունների։

Առերևույթ թվում է, թե նա բանավիճում է Հովսեփ Վարդանյանի հետ և կարծեք հոդվածաշարքն էլ գրված է Վարդանյանի դեմ։ Նա հարձակվելով Վարդանյանի այն կարծիքի վրա, թե հայ գյուղացին չպետք է մեքենայացնի իր աշխատանքը, այդ տեսակետը համարում է տգիտության արդյունք և պահանջում է մեքենայացնել երկրագործությունը, մասնագիտական հմտությամբ խոսում է տարբեր կլիմայական պայմաններում գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների զարգացման հնարավորության մասին, սակայն ըստ էության հիմնական հայեցերում կանգնում է Վարդանյանի դիրքերում։ Հակառակ Սվաճյանի կարծիքին, սա էլ գտնում է, որ հայ իրականության մեջ, հայ գյուղում պետք է միայն հումք արտադրվի, իսկ մշակումը պետք է կատարվի Եվրոպայում։

«Ես կպնդեմ,— գրում է նա,— որ Տաճկաստանի նպատակը գլխավորապես նախնական նյութերուն արտադրությունը պետք է ըլլա և ոչ թե զուտ ճարտարություն (արդյունաբերական մշակում — Գ. Ստ.). այսինքն՝ պետք է, որ Տաճկաստանի բնակիչք ամեն ջանք, ամեն միջոց գործ դնեն երկրագործության հետևելու, և ոչ արվեստից։ Առաջինով Եվրոպիո ահավոր գործարաններուն պետք եղած նախնական նյութերն հայթայթելով կդնեն հարբստություն։ Երկրորդ՝ Եվրոպիո ուսմանց և դրամագլխոց զորությունը, այսինքն՝ այս ահավոր գործարաններուն հետ մրցելու երբեք չկրնալ կարող ըլլալնուն պատճառով կգտնան չքավորություն»[1]։

Եթե Սվաճյանը հայ գյուղացու թշվառության, դժբախտության հիմնական պատճառներից մեկը համարում էր այն, որ նա հումքը տալիս է օտարին և նրանից հարյուրապատիկ թանկ ստանում ամենակենսական իրերը, այն էլ մեծ դժվարությամբ, ապա Ջրասունյանը կողմնակից լինելով Եվրոպայից կախման մեջ լինելու տեսակետին, այն կարծիքին է, թե ընդհակառակը հայ գյուղացու աղքատության պատճառն այլ է՝ նրա արդյունահանած մթերքները վաճառող առևտրականը, չկարողանալով մրցել եվրոպական առևտրական ընկերությունների հետ, տուժում է և աղքատանում, իր հետ աղքատացնելով գյուղացուն։

Ջրասունյանը անդրադառնում է նաև գյուղացուն հողով ապահովելու հարցին։ Նա գրում է, որ Տաճկաստանը 180 միլիոն հեկտար հող ունի, որից միայն 25 միլիոնն է մշակվում, հետևաբար պետք է աշխատել բոլոր հողերը մշակել և մշակել կատարելագործված տեխնիկայով, իսկ այդ դեպքում ժողովուրդը կհարստանա։

«Բազմաթիվ փորձերով կատարելապես հաստատյալ է,— գրում է Ջրասունյանը,— որ երբ ուսմամբ գործվի երկրագործական ճարտարության այս ճյուղին մեջ, բերքին արտադրական գինը իր որոշյալ գնուն կեսն է»։ Ապա Ջրասունյանը խանդավառ բացագանչում է. «Ո՞նչ հարստություն»[2]։

Բայց ի՞նչպես անել, որ այդ վիթխարի քանակությամբ հողը տրվի մշակո-

[1] «Մասիս», 1863, № 618։
[2] «Մասիս», 1864, № 624։

դին, օգտագործվի, հողազուրկ մարդիկ հող ստանան։ Այս հարցին Ջրասունյանը պատասխանում է յուրովի։

Վարդանյանի նման սա էլ ունի իր բարոյախոսական քարոզը։ Նա առաջարկում է կալվածատերերին՝ ընդհանուր ջանքեր գործադրել և գնել անմշակ հողը, վարձով տալ գյուղացուն, որ մշակի. միաժամանակ բարի աչքով նայել հողի մշակին։

«Արդար է, որ,— գրում է նա,— կալվածատերը, որ միայն ինքն այս աճման օգուտը պիտի քաղեր, իր կողմանե վարձավորին մեկ բանի օգուտներ թողնելով՝ գործին օգնե»[1]։

Ջրասունյանն ունի շատ զգույշ ակնարկներ այն աշխատությունների վերաբերյալ, որոնք հողի մշակման, գյուղացուն հողով ապահովելու մասին այլ առաջարկներ են անում։ Ամենայն հավանականությամբ ակնարկելով Նալբանդյանի աշխատությանը, խորհուրդ է տալիս զգուշանալ «մոլորական գրվածքներից»։

Ջրասունյանից շատ բանով տարբեր չէ Պառնասյանը։ Նա Նալբանդյանի «Երկրագործության» շուրջը ծավալված բանավեճին մասնակցում է նույն դիրքերից, ինչ որ Ջրասունյանը։ Նա նույնպես ակնարկում է, որ երկրագործության հարցի առաջ քաշման ժամանակ հրապարակ են գալիս «վտանգավոր» գաղափարներ տարածող աշխատություններ, որոնք «գտակար չեն հայ ժողովրդին։

Պառնասյանը շատ ավելի որոշակի կերպով է հակադրվում Նալբանդյանի դաղափարներին, քան Ջրասունյանը և Վարդանյանը։

Բոլոր լիբերալներին հատուկ դեմագոգիկ ծեղծեղումներով Պառնասյանը նշում է, որ արդարև հասարակական կյանքում կա անարդարություն, կա շահագործում, որ մեկն աշխատում է, ուրիշը՝ վայելում։ Իր բառերով ասած՝ «Ճշմարիտ է, որ բնկերական ներկա կազմության մեջ անարդարություններ կան, մեծ անարդարություններ, վասնզի այն, որ ամենեն ավելի կաշխատի, ամենեն ավելի վարձատրություններ չընդունիր, և այլն, ով ամենեն ավելի տաղանդ ունի, աստիճանով ամենեն բարձր չէ, այլ ծույլ հարուստները շատ անգամ հարյուրավոր աշխատավորաց վաստակը կուտեն և անմիտ իշխաններ մարդկային բնկերության վրա կբռնանան»[2]։

Պառնասյանը, նույնպես, գիտակցում է, որ հասարակությունը կազմող առանձին անհատների երջանկությունը, հարստությունը, չի նշանակում ամբողջ ժողովրդի հարստություն, որ ժողովրդի հարստությունը պետք է պատկերացնել իր հավաքական ամբողջության ու ընդհանրության մեջ։ Նա ասում է, որ «արևելյան ազգաց հարստությունը՝ իշխանաց, պաշտոնեից և հարկապահանջից բաժինը միայն եղած է, որք երբեմն իրենց ճոխությունը հասարակաց օգտակար բաներու ալ գործածած են»[3]։ Սակայն այս բոլորով հանդերձ, նպատակը ֆեոդալական տնտեսաձևի փոխարեն բուրժուական տնտեսաձևի առավելության հիմնավորումն է, որն անշուշտ այդ ժամանակաշրջանում պրոգրեսիվ էր։

Նախամարքսյան տնտեսագետների աշխատությունները սերտած Պառնասյանը, հասարակական մի ֆորմացիայի անցումը մի այլ ֆորմացիայի բացատրում է իդեալիստորեն, չի կարողանում տեսնել այդ երևույթի տնտեսա-

---

[1] «Մասիս», 1864, № 633։
[2] «Մասիս», 1866, № 736։
«Մասիս», 1865, № 682։

կան հիմքը։ Ինչպես բուրժուական շատ տնտեսագետներ, ֆրանսիական արքայական դինաստիայի կործանումը բացատրում էին Լյուդովիկոս 16-րդ-ի պալատական շռայլություններով, սանձարձակ կենցաղով, Պառնասյանն էլ նման բացատրություն է տալիս ֆեոդալական տնտեսաձևի անկմանը։

Նա, անդրադառնալով կալվածատիրական և գյուղացիական դասակարգերի փոխհարաբերությանը, տալիս է երրորդ դասի՝ բուրժուազիայի բնութագրումը և ֆեոդալիզմի քայքայման մասին գրում է.

«Բուրժուազի ըսված միջակ մասը կազմեց,— որուն վրա թեև ավատական աղնվապետությունը երկար ատեն արհամարհանքով կը նայեր, բայց իր անբարտավան շռայլությամբ միայն իր կործանումը փութացուց»[1]։

Պառնասյանը խոսում է նաև ժողովրդի նյութական վիճակի բարվոքման մասին, նշում հարստանալու միջոցներ։ Այս հարցում նա պաշտպանում է միանգամայն իդեալիստական տեսակետ։ Նրա կարծիքով հարստանալու նախապայմանը առաջին հերթին ոչ թե նյութական միջոցների արտադրությունն է, հողի մշակումը, այլ քաղաքատնտեսություն սովորելը։ Հարստության ապահովումից առաջ, պետք է մարդիկ քաղաքատնտեսություն սովորեն, որովհետև քաղաքատնտեսությունը մի գիտություն է, որը ըստ նրան, սովորեցնում է հենց հարստանալու միջոցները։ Ուրեմն եթե դպրոցներում քաղաքատնտեսական առարկան ավանդվի ըստ արժանվույն, մարդիկ իրազեկ լինեն այդ գիտությանը, իրենց աշխատանքները կառուցեն ըստ քաղաքատնտեսական պահանջների, ապա նրանք հեշտությամբ կկարողանան հարստանալ։

Իսկ որո՞նք են հարստանալու տնտեսական հիմքերը։ Պառնասյանը կրկնում է մեր թվարկած նախորդ բոլոր մարդկանց տեսակետը, թե այնուամենայնիվ, հիմնական աղբյուրը մնում է երկրագործությունը. «Երկրագործության մեջ աշխատությունն ավելի արդյունավոր ըլլալով, ավելի զորավոր անհատները ու կառավարությունները, որք կրոնից կամ ավանդության զորությամբ տիրապետությունն իրենց ձեռք անցուցած են, արմտյաց ավելորդն ալ իրեն կպահանջեն»[2]։

Իր տեսակետներն առաջադրելուց հետո, Պառնասյանն իր ամպածրար բարձրությունից նայում է հայ գյուղացու վրա, տեսնում նրա թշվառ վիճակը ու հարցնում, թե «զույգ մը եզ գնելու անկարող երկրագործներեն ինչ կրնա հուսացվիլ»։

Այստեղից էլ դարձյալ առաջանում է գորդիասի հանգույցի լուծման անհրաժեշտությունը։ Պառնասյանի լուծումը նույն լիբերալ լուծումն է, ինչ որ Ջրասունյանինը։ Նա ենթադրում է, որ եթե գյուղատնտեսությունը մեքենայացվի, մարդիկ ավելի ծրագրված ու մտածված աշխատեն, ապա բարեկեցիկ վիճակի մեջ կլինի գյուղացին։

Հիմնական միջոցը նա համարում է ընկերություններ հիմնելը և հավաքական ուժերով գյուղատնտեսական աշխատանքի կազմակերպումը։

Պառնասյանը լավ իրազեկ է ուտոպիստ-սոցիալիստների ուսմունքին, ժամանակի քաղաքական հոսանքների, միությունների, պարտիաների ծրագրերին։ Նա ծանոթ է և՛ սոցիալիզմի, և՛ կոմունիզմի գաղափարներին։ Խոսելով

---

[1] «Մասիս», 1865, № 687։

[2] «Մասիս», 1865, № 682։

սոցիալիզմի մասին, նա բերում է գոյություն ունեցող աղաղակող հակասությունները և զարմանքով արձանագրում, թե այդ բոլորից հետո մի՞թե կարելի է ասել, թե «հավասարությունը չարիք մէ ընկերության համար»։ Բայց երբ նա անցնում է կոնկրետ առաջարկների, դրսևորում է իր ամբողջ սարսափը նույն սոցիալիզմից։

Կանգ առնելով այդ երկու ուսմունքների վրա, Պառնասյանը գրում է.

«Այս դաղափարները, գլխավորապես, երկու կարգ կբաժնվին, ըստ առաջնույն, ապրուստի համար պետք եղած բոլոր քննական միջոցները ընկերության ամեն անդամոց մեջ բաշխելու է բացարձակ հավասարությամբ, իսկ ըստ երկրորդին, առանց բացարձակ հավասարություն պահելու, բաշխումն արդարության և ընդհանուր օգտի վերաբերյալ սկզբանց վրա հիմնելու է, առանց թողլո, որ հիմակվան պես ընկերական անհավասարությունները շատ անգամ դիպվածի կամ բռնության վրա կախում ունենա։

Արդեն Եվրոպայի փիլիսոփաները զանազան դրությունքներ խորհած են ընկերական կազմության մեջեն անարդարությունները վերցնելու համար և այս դրություններն են, որ երբեմն հանրականություն (քոմունիզմ), երբեմն ալ ընկերականություն (սոսիալիզմ) անունները կառնուն»[1]։

Վ. Պառնասյանը Սեն Սիմոնին համարում է մի մարդ, որը ճիշտ չի ըմբռնում հասարակական հարաբերությունները, իր «տնտեսական սկզբանց հետ քիչ մա՛լ միստիկություն խառնած է»։

Թվում է, թե Պառնասյանն ավելի հակված է Շառլ Ֆուրյեի կողմը, «Ֆուրյեի դրությունը առավել բանավոր է և առավել գիտնական սկզբանց վրա հենյալ է, վասնզի առանց սեփականությունը բոլորովին չնչելու, անոր մեջ գտնվված անարդարությունները կը վերացնե»[2]։

Հենց նրա վերջնական եզրակացությունն էլ հանգում է այն բանին, որ անհրաժեշտ է Ֆուրյեի առաջարկած ֆալանգների նման հայ իրականության մեջ ընկերություններ հիմնել և այդ ընկերություններով բարվոքել աշխատավոր գյուղացիության տնտեսական վիճակը։

Նկատի առնելով այն հանգամանքը, որ Տաճկաստանի մեջ «զույգ մը եզ գնելու» կարողությունը ունեցող հայ գյուղացիներ քիչ կան, նա գտնում է, որ անհրաժեշտ միջոցները «անհատները ընկերություններ կազմելով պետք է հայթայթեն և որչափ քաջալերության, ապահովության, պաշտպանության կարոտություն կա, զորս կառավարությունը պետք է մատուցանե»։

Պառնասյանը ունի նաև այլ դիտողություններ և առաջարկություններ, որոնք արդեն դալիս են Մալթուսից։ Նա Մալթուսին համարելով մի գիտնական, որը «մեծ ծառայություն մատուցած է» մարդկությանը, առաջարկում է հայ իրականության մեջ առաջացած գորդիասի հանգույցը լուծել հենց Մալթուսի դեղատոմսով։ Զարդացնելով այն միտքը, թե «քաղաքակրթյալ ընկերության մը մեջ մարդոց առաջին պարտավորությունն է զավակ ունենալե առաջ անոնց համար ապրուստ և բարելավ վիճակ մը պատրաստել և չէ թե անասնոց նման զավակներ բերել և դանոնք մեծացնելու հոգը չմտածելով խեղճությամբ ու

[1] «Մասիս», 1866, № 736։

[2] Նույն տեղում։

[3] 1863 թ. Սեն-Սիմոնի նկատմամբ որոշ չափով հանդուրժողականություն հանդես բերող Պառնասյանը, 1868 թ. ավելի աջ կնայով, ատելությամբ լի տողեր էր գրում Սեն Սիմոնի հասցեին նույն լիբերալ «Մասիսի» էջերից նրան համարել իմաստակ։

տգիտությամբ ապրելու դատապարտել»[1], առաջարկում է կրճատել բնական աճը։ Նա անսահման հնարավորություն է տալիս հարուստներին բազմանալու, որովհետև նրանց ապրուստի միջոցները ապահովված են, իսկ աղքատներին պարզապես առաջարկում է չամուսնանալ կամ երեխա չունենալ։ «Այստեղ — գրում է նա,— հարկ կհամարենք ուշադրություն հրավիրել մեր գավառական ազգայնոց ընթացքին վրա, որք ինչպես ուրիշ բաներու, նույնպես ալ ամուսնության մասին տակավին իրենց հին և տգիտական սովորությունները չեն բարեկարգեր։ ... Կարճատես պատանին և պարզամիտ օրիորդը, սիրո ոսկեղեն երազներ կտեսնեն, որք դժբախտաբար շատ անգամ հոդս կցնդին և իրենց ուսերուն վրա թշվառ զավակներ կթողուն, զորս բարվոք մեծացնելու և դաստիարակելու անկարող են»[2]։

Իսկ ինչ պետք է անել Պառնասյանի կարծիքով այս մեծ աղետը կանխելու համար. պահանջել կղերից աղքատներին ամուսնության հրաման չտալ։

Սրանք այն տնտեսագետների կարծիքներն են, որոնք գավառից հեռու, նստած Պոլսի ծովահայաց պատշգամբներում, ցանկանում էին հայ գյուղացու դրությունը բարվոքել վերացական դատողություններով, առանց մոտիկից ուսումնասիրելու բուն գյուղը։

Լիբերալ այս երազները թավալանցում էին նաև գյուղ։ Գյուղական միջավայրում էլ մենք տեսնում ենք, անշուշտ Պոլսից եկած ուսուցիչների և այլ ծառայողների մոտ,— նման երազողներ։

Այդպիսի մի երազող է Միսակ Թիմուրյանը։ Նա ապրել է Ակն քաղաքում։ Նկատի ունենալով Ակնա շրջանի գյուղացիության տնտեսական ամենածանր վիճակը, Թիմուրյանը որոշում է գյուղացուն փրկել շատ հեշտ ճանապարհով։ Նա 1865 թվականին Ակնում կազմակերպում է «Նահապետական» ընկերությունը, գրում է մի բրոշյուր այդ ընկերության խնդիրների ու հեռանկարների մասին, որը լույս է տեսնում 1866 թվականին Կ. Պոլսում «Առաջարկություն Նահապետական ընկերության» վերնագրով։ Ո՞րն է Թիմուրյանի առաջարկած ծրագիրը[3]։

Նախորդ գործիչների նման Միսակ Թիմուրյանն էլ նկատում է, որ հայ գյուղացին ապրում է տնտեսական ամենածանր վիճակում, ավուր հացի կարոտ է։ Նա քաղաքի ու գյուղի տարբերության վրա երկարորեն կանգ առնելուց հետո գրում է. «Երկրագործն իր ժողոված բերքերը որքսն առատապես քաղաքացոց կընծայե ու ինքը միայն ավուր պարենով կբավականանա», թե քաղաքների «միլիոնավոր դատարկաշրջիկները անոնց աշխատանքովը կկերակրվին, պալատները և մեծամեծ ամարանոցները և վաճառանոցները դարձյալ երկրագործին քրտնաջան աշխատությամբ կլեցվին»[4]։

Թիմուրյանը սոցիալական չարիքի պատճառը ոչ թե համարում է գյուղացու շահագործումը ներքին և արտաքին կեղեքիչների կողմից, այլ քաղաքի և գյուղի հակադրությունը։

Ո՞րն է նրա ծրագիրը։ Ինչպես Ջրաստունյանը, Պառնասյանը և մյուս լիբերալները, Թիմուրյանն էլ տնտեսական խնդրի լուծումը կապում է երկրագոր-

---

1 «Մասիս», 186 № 731։

2 Նույն տեղում։

3 Թիմուրյանի ուտոպիական ծրագրին անդրադարձել է ընկ. Ա. Կարինյանը իր «Հին Թյուրքիան և Թյուրքահայերը» հոդվածում։ (Տես «Ներքո», 1928)։

4 Մ. Թիմուրյան, Առաջարկություն Նահապետական ընկերության, 1865 թ., էջ 8

ծության զարգացման հետ։ Այլ արհեստների, զբաղմունքների հետ համեմատելով նախապատվությունը տալիս է հողագործությանը, որը նրա բառերով ասած «մարդկային ընկերության» համար «առավել շահավետ և օգտակար է»։

Թիմուրյանի ուտոպիական ծրագիրը շատ ավելի որոշակի կերպով է բացահայտում նրա դասակարգային շահագրգռվածությունը և սերտ կապը եկեղեցու և տիրապետող դասակարգերի հետ։ Այդ ծրագրից երևում է, որ նրան ավելի հետաքրքրել է պետությանը, եկեղեցուն և կալվածատերերին հասանելիք տուրքը ժամանակին տալու հնարավորության խնդիրը, քան թե գյուղացուն հացով ապահովելու հարցը։ Նա ունի երեք առաջարկ.

Նախ՝ նկատի ունենալով, որ անհատական միջոցներով դժվար է ընդհանուր օգուտ ձեռք բերել, առաջարկում է հիմնել մի ընկերություն, որը ամեն ինչ կազմակերպի հավաքական ձևով, կազմակերպի ոչ միայն գյուղական աշխատանքի պրոցեսը, այլև ժողովրդի սոցիալ-տնտեսական կենցաղային ապրուստի ընթացքը։ Ընկերության ղեկավար հանձնաժողովը, «տեսչական ժողովը» հանդես կգա կոլեկտիվի կողմից, և «տերության օրինաց համեմատ արքունական տուրքերը» կվճարի ժամանակին, հոգևորականների բաժինն էլ կհանի և մնացածով համեստ կյանք կվարի։

Թիմուրյանի երկրորդ առաջարկը սակավապետությունն էր, ծայր աստիճան խնայողությամբ ապրելու քարոզը։ Քանի որ աստված մարդկանց ստեղծել է կենցաղային ամենապարզ վիճակում, ի՞նչ կարիք կա հեռանալ աստուծո սահմանած այդ օրենքից և ընկնել շռայլության մեջ։ Թիմուրյանի երևակայած հայ գյուղում գյուղացին սնվելու է համեստ կերակուրներով, հագնելու է պարզ, ապրելու է միաձև, անզարդ տներում։

Օրրորդ պահանջը աշխատասիրությունն է, պայքարը ծուլության դեմ։

Ահա այս երեք պայմանները եթե լինեն, ասում է Թիմուրյանը, մարդիկ կարող են երջանիկ ապրել[1]։

Նալբանդյանի «Երկրագործության» մեջ արծարծվող գաղափարների արձագանքների, կամ առանձին արտահայտությունների օգտագործման մենք հանդիպում ենք նաև այլ հեղինակների մոտ։ Այսպես Ա. Այվազյանը, որ 1860—1861 թթ. հանդիպել է Նալբանդյանին, ծանոթ է եղել նրա երկերին, 1870 թ. գրած իր մի հոդվածում հարևանցիորեն անդրադառնալով հայ ժողովրդի տնտեսական վիճակին, գրում էր. «Անմահ Նալբանդյանի վերջին կտակն էր «Ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի»[2]։

Այվազյանը Նալբանդյանի վերոհիշյալ միտքը տալիս է այն ձևով, ինչ ձևով որ Սվաճյանն այն դարձրել էր իր առաջնորդողի վերնագիրը, սակայն նա դրանով էլ բավարարվել է և զգուշացել այդ հարցը հանդամանորեն քննության առնելուց։ Հետագայում, 1893 թ. երբ առավել խստությամբ արդելված էր Նալ-

[1] Թիմուրյանի բոլոր ջանքերը անցան ապարդյուն։ Նրա կազմակերպած «Անհատական» ընկերությունը կարողացավ հարյուր ոսկի հավաքել և հանձնել Գ. Արվանձտյանցին, որպեսզի դնի այդ տարօրինակ կոոպերացիայի հիմքը։ Արվանձտյանցը վարձեց Ակնա մոտ մի գյուղ, ընկերության առաջարկով այն կոչվեց Հայ գյուղ ու այնուհետև սկսվեց բացատրական աշխատանքը մարդկանց դեպի այդ գյուղը գաղթեցնելու համար։ Մի քանիսը թողեցին իրենց գյուղերը, տեղափոխվեցին Հայ գյուղ, սակայն շուտով փախան։ Փախչողներից առաջինը եղավ Թիմուրյանը, որը ընտանիքով իր շունչը առավ Մուշում ու այնտեղ էլ ապրեց մինչև իր կյանքի վերջը։ (Տես Գ. Արվանձտյանց, «Թորոս աղբար», հատ. Ա, էջ 268։

[2] Տես «Մամուլ», 1870, № 84։ Նույն՝ «Սիոն» 1870 թիվ № 5, էջ 10։

բանդյանի ժառանգությունը, Նալբանդյանի անունը տալն անգամ արգելված էր, Այվազյանն իր «Շար հայ կենսագրությանց» գրքում վախենում է նաև «Երկրագործության» անունը տալուց, այն կոչում է «ընկերաբանական մեկ գործ, որ յուր տնտեսագիտական տեսակետովը ժամանակին գնահատված է, գլուխ գործոցը համարված է»[1]։

Վերոհիշյալ հեղինակներից անհամեմատ տարբեր է Գևորգ Շիրինյանը, որը «Երկրագործության» լույս ընծայումից ուղիղ մեկ տասնամյակ անց՝ 1872 թվականին հրատարակում է մի գիրք «Աղքատություն և իր դարմանները ի գյուղորես» վերնագրով։

Գ. Շիրինյանն ավելի անմիջականորեն է արձագանքում Նալբանդյանի առաջ քաշած հարցերին, բերելով նրանից ընդարձակ մեջբերումներ։

Նա չունի ոչ Պառնասյանի, և ոչ էլ Ջրասունյանի քաղաքատնտեսական գիտելիքները։ Առհասարակ չափավոր մտավոր կարողության տեր մի գյուղական ուսուցիչ է, բայց, հենց այդ զբաղմունքն էլ նրան հնարավորություն է տվել գյուղական կոնկրետ պայմանները տեսնելու ավելի մոտիկից, քան իր նախորդները։

Շիրինյանը մեծ կարևորություն է տալիս երկրագործության զարգացմանը։ Նա, ի տարբերություն Վ. Պառնասյանի և Հ. Ջրասունյանի, մի շարք հարցերում կանգնում է Սվաճյանի կողքին՝ հենվելով Նալբանդյանի մտքերի վրա։

Շիրինյանը որոշակիորեն պնդում է, որ տնտեսական հարցը չլուծած լուսավորություն քարոզելը անմտություն է, որ կենսականը, առաջնայինը հացի պրոբլեմի լուծումն է։ Դեմ գալով քրիստոնեական այն վարդապետությանը, թե այս աշխարհում տառապելը ապահովում է հանդերձյալ կյանքի երջանկությունը, կարծես ձայնակցելով Արմենակ Հայկունուն, գրում է, որ հիմնականը այս աշխարհում հանգիստ ապրելն է «մարդը այսպիսի վիճակի մը մեջ լքյալ և թշվառ արարած մըն է, անոր համար տանջանք մըն է կյանքը, զոր վայելելու համար եկած է աշխարհ»[2]։

Շիրինյանն ունի ավելի բնորոշ տողեր, որոնք առաջնությունը տալիս են բացառապես տնտեսականին։ Նա գրում է «Որը նյութական կենաց միջոցները պակսին մարդու մը, ալ մտավոր ու բարոյական կյանքը իրեն աչքին բնավ արժեք մը չունի. երբ մարմինը հաց ու հանդերձ չունի, անոր ականջները ոչ ևս կլսեն բարոյականի քարոզները»[3]։

Շիրինյանը մանրամասնորեն կանգ է առնում բուրժուական հասարակարգում փողի կատարած ամենազոր դերի վրա, ցույց է տալիս, որ նա, ով հարստություն չունի, ոչ հարգ ունի և ոչ պատիվ, ոչ առողջություն, ոչ ուրախություն. դրանք բոլորը հարուստների իրավունքն են։ Աղքատ խելոքը, պատվավորն արհամարհվում է, հարուստ անբանը՝ արժանանում պատվի։

Նշելով, որ տնտեսական ծանր վիճակում գտնվող մարդը չի կարող մտածել ազատության և այլ բարոյական հասկացողությունների մասին, Շիրինյանը հարցնում է.

«Արդ այսպիսի դառն վիճակի մը մեջ մարդս կրնա՞ իր կամքին և իր ազատության տերը լինել»[4]։

---

[1] Ա. Այվազյան, «Շար հայ կենսագրությանց», էջ 98։

[2] Գ. Շիրինյան, «Աղքատություն և իր դարմանները ի գյուղորեսս», Կ. Պոլիս, 1872 թ., էջ 20։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

Տնտեսական խնդրի որոշակի առաջ քաշումը, այդ խնդրի լուծման հարցում լիբերալ իլյուզիաների դեմ գնալը, կարծեք Շիրինյանին մոտեցնում են Նալբանդյանին։

Շիրինյանի աշխատությունը ցույց է տալիս, որ նրա տրամադրության տակ եղել է «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը։ Նա թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի կերպով բազմաթիվ մեջբերումներ է կատարել այդ գրքից։

Նալբանդյանի այն հարցադրումը, թե բռնադատյալ վիճակում մարդս չի կարող ազատ լինել, և որ վերևից եկած ազատությունը ցողի նման է, մի քիչ տարբեր խմբագրմամբ, ռևոլյուցիոն դեմոկրատական ոգուց հեռացվելով, Շիրինյանի մոտ դարձել է այսպես «Պետք չէ երբեք հավատալ, թե բռնադատյալ ծառայությամբ կարող կրնա լինել մարդ գոհացուցիչ կյանք ունենալու։ Այն աղբյուրը, որ ջրի ակն չունենալով անձրևի ջրերեն է իր գոյությունը, նա դադրածին պես ինքն ալ ընդհուպ կչորանա»[1]։

Եթե այս մտքերը մոտավորապես են հիշեցնում Նալբանդյանի հռչակավոր տողերը, ապա Շիրինյանը մի այլ առիթով, արդեն ուղղակի մեջբերումներ է կատարում Նալբանդյանից, առանց համարձակվելու Նալբանդյանի կամ Սիմեոն Մանիկյանի անունը հիշելու[2]։

Նալբանդյանից կատարած նրա այդ մեջբերումները ցույց են տալիս, թե «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության որ գաղափարներն է ընկալել նա՝ անշուշտ յուրահատուկ ձևով»։

Խոսելով ժողովրդի ծանր վիճակի մասին, այն մասին, որ այդպիսի դրության մեջ մարդ չի կարող լինել ազատ, և որ ազատությունը մի ֆիկտիվ բան է, Շիրինյանը բերում է Նալբանդյանի հետևյալ հայտնի տողերը.

«Բայց, ասա խնդրեմ, ազա՞տ եմ ես միմիայն օրենքով, քաղաքականապես ազատ կոչելով. ազա՞տ եմ ես, քանի որ նյութական կարողությունը ստիպում է ինձ կամա ակամա մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայությամբ հաց ճարել իմ ընտանիքի համար։ Ազա՞տ եմ ես, եթե տեր ունիմ, որին եթե իմ աղքատությունը հայտնեմ, բացարձակապես պիտի զրկեմ ապրուստից և ինձ (զիս) և իմ ընտանիքս ծառա լինելուց դադարելու և այս բոլորից հետո ազատ եմ ես... Երևակայության մեջ, թե՞ օդի մեջ»[3]։

Այս ամբողջ հատվածի մեջ Շիրինյանը միայն արևելահայ ինձ դերանունը իր արևմտահայ ընթերցողներին հասկանալի դարձնելու համար փակագծի մեջ ավելացրել է զիս արևմտահայ ձևը. մնացած ամբողջ հատվածն արտագրված է Նալբանդյանից և աղբյուր նշված «Ազգային գրագետ մը»։

Շիրինյանի մոտ, իհարկե, Նալբանդյանի ռևոլյուցիոն հարցադրումը բացատրվում է շատ նայիվ, բայց մի բան պարզ է, նրա կարծիքով «ծառայության

---

[1] Գ. Շիրինյան. «Աղքատությունն և իր դարմանները ի գյուղորեա», էջ 29։

[2] Առհասարակ թե Պոլսում և թե Թիֆլիսում Նալբանդյանի «Երկրագործությունն» օգտագործողները միշտ խուսափել են Սիմեոն Մանիկյան անունը հիշատակելուց, այն պարզ պատճառով. որ բոլորին հայտնի է եղել, որ այդ գրքի հեղինակը Նալբանդյանն է։

Երբ Մխիթարյաններից Գ. Զարբհանալյանը Վենետիկում հրատարակում է իր «Հայ մատենագիտությունը» և «Երկրագործությունը» ներկայացնում է որպես Սիմեոն Մանիկյանի հեղինակություն. Ա. Արփիարյանը սուր քննադատության ենթարկելով Զարբհանալյանին, բողոքում է, որ այդ աշխատությունը չի դետեղվել Նալբանդյանի անվան տակ։

[3] Գ. Շիրինյան, «Աղքատությունն և իր դարմանները ի գյուղորեա», էջ 27։

անվան տակ մարդն իր ազատութենեն զրկելով, ուրիշի կամքին գերի ընել, մարդկային իրավունքե և համերաշխութենե դուրս էր»[1]։

Նա իր վերոհիշյալ միտքը նույնպես ցանկանում է հիմնավորել Միքայել Նալբանդյանի դրույթներով և բերում է մի նոր, ընդարձակ մեջբերում։

«Բայց, ես մտածում եմ, որ կարող է և մանավանդ երջանիկ, եթե աշխատությունը բռնադատական չէ, այլ կամայական, եթե նա աշխատություն է և ոչ ծառայություն, եթե մարդկային իրավունքներն անխտիր հավասարաչափ են և ոչ մինն ավելի, իսկ մյուսն ալ պակաս»[2]։

Դարձյալ որպես աղբյուր նշվում է «Նույն ազգային դրագետը»։

Դ. Շիրինյանը մի այլ հարցում էլ կանգնած է Նալբանդյանի և Հ. Սվաճյանի տեսակետի վրա։ Նա կողմնակից է, որ հայ գյուղացու ստացած հումքը՝ բամբակ, բուրդ և այլն, մշակվի տեղական արդյունաբերողների կողմից։

«Անտարակույս եմ,— գրում է նա,— որ երբ մտքերն այդ լույսերով զարդանան, երբ Տաճկաստանի մեջ երկրագործությունը ծաղկի, հայնժամ, այն պոլսեցին, և այն ուրիշ ծովեզերյա քաղաքացին, որք այժմ իրենց երկրի, Տաճկաստանի ժողովրդոց հետ առևտուր ընելով կապրին, բայց միայն Եվրոպացին կհարստացնեն, պիտի արթննան և արթնցնելով գյուղացին, հարստության մեծ աղբյուրի մը վրա պիտի խորհին՝ այն է մեծ ընկերություններ կազմել, գործարաններ հիմնել, ներքին բերքերը՝ բուրդը, բամբակը, մաղը և մետաքսը շահագործել»[3]։

Շիրինյանը մի քայլ առաջ է նախորդներից նրանով, որ նա առաջարկում է ընկերություններ կազմել ոչ միայն երկրագործությանը զարկ տալու, այլև գործարաններ հիմնելու, արդյունաբերության զարգացմանը նպաստելու համար։

Բացի վերոհիշյալ ուղղակի և անուղղակի մտքերից, որոնց մասին խոսեցինք, Շիրինյանը վերցրել է նաև Նալբանդյանի պատմելաձևը, պոլեմիկական այն ոճը, որ նա բանեցրել է «Երկրագործության» մեջ իր մտքերը աշխույժ դիալոգներով ներկայացնելով ընթերցողներին։ Այսպես, Նալբանդյանի վերև բերված ցիտատից անմիջապես հետո նա տալիս է հետևյալ խոսակցությունը.

«— Ըսել է, որ ծառայությունը չեք ընդունիր։

— Ծառայությունը կընդունիմ, առանց անհատական ազատությունը զոհելու։ Եվ այն նշանակությամբ, որ ծառայությունը ուրիշ բան չլինի, բայց եթե հանձնված գործ մը կատարել. և հոս, ինչու մեկու կողմեն ստրկություն և մյուսին կողմեն տիրապետություն լինի. մի՞թե հարուստին ոսկիները աղքատին քսակը պիտի լցվին։ Ո՞չ ապաքեն ստրկական ծառայության մը փոխարեն չընչին վարձ մը»[4]։

Շիրինյանի և՛ հարցադրումներն են հստակ և՛ եզրակացությունները համարձակ։

Բայց ո՞րն է վերջիվերջո նրա ծրագիրը։ Այստեղ է, որ նա կանգ է առնում և այլևս առաջ չի գնում։ Ընդունելով հանդերձ «Երկրագործությունը իբրև ուղղակի դարման գյուղական աղքատության» (ինչպես տեսնում ենք այս տողերն էլ հիշեցնում են հենց Նալբանդյանի աշխատությունը), նա կարծեք շեղում է հարցը և այն տեսակետը զարգացնում, որ այդ բոլորը կարող են կենսա-

[1] Դ. Շիրինյան. Աղքատություն և իր դարմանները, էջ 27։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 7։
[4] Նույն տեղում, էջ 28

գործվել, եթե ձեռնարկվեն հետևյալ միջոցները, եթե գյուղացիներն աշխատեն ավելի մտածված և հանդով, եթե գյուղը լուսավորվի, աշխատավորության մեջ տարածվի ուսումն ու դաստիարակությունը, փոխվեն հողի մշակման հին եղանակները, մեքենայացվի գյուղատնտեսական աշխատանքը, հիմնադրվեն փոխադարձ օգնության ընկերություններ, և վերջապես եթե գյուղացին դառնա ավելի խնայող և պարզասեր, հեռու մնա շռայլությունից, ավելորդ ծախսեր չկատարի։

Հայ գյուղացու սոցիալ-տնտեսական կյանքի բնութագրումները տալով հանդերձ առաջադիմական դիրքերից, Շիրինյանն իր առաջարկների մեջ հեռու չի գնում մյուս տնտեսագետների պահանջներից և ի վերջո մեզ ներկայանում է գրեթե նույնպիսի մի լիբերալ մտածող, ինչպիսին էր Հ. Ջրասունյանը, որը նույնպես, ինչպես տեսանք, Նալբանդյանի «Երկրագործության» վերնագիրը բառացի կրկնում էր և ներկայացնում ընթերցողներին որպես հիմնական ճանապարհ տնտեսական խնդրի լուծման։

IV

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պահպանողականները շատ ավելի ծրագրված ու մոլեգին պայքար են մղել «Երկրագործության» բարձրացրած գաղափարների դեմ, քան լիբերալները, բայց մղել են եզվիտյան մեթոդներով, առանց Նալբանդյանի կամ նրա «Երկրագործության» անունը հիշատակելու։

Հենց նույն այն օրերին, երբ Սվաճյանը պատրաստվում էր մեկնել գավառ ռևոլյուցիոն կազմակերպչական աշխատանք ծավալելու, Տերոյենցը, որ մինչ այդ տևական պայքար էր մղել Նալբանդյանի գաղափարների ու նրա ստեղծած ռևոլյուցիոն կենտրոնի դեմ, հանկարծ ընդհատում է «Երևակի» հրատարակությունը և լույս ընծայում ժեռառ Աբբայի «Խորհուրդ գաղտնի ընկերության» աշխատությունը՝ մի ընդարձակ առաջաբանով, որտեղ, ինչպես և ամբողջ վեպի մեջ՝ Եվրոպայում ստեղծված ռևոլյուցիոն գաղտնի կազմակերպությունները ներկայացվում են որպես ավազակային և մարդասպանական շայկաներ, իսկ նրանց դավանած սկզբունքները, հետապնդած գաղափարները համարվում է հերետիկոսություն և անաստվածություն։

Տերոյենցն այդ առաջաբանում իր ընթերցողներին բացատրում է, որ նման գաղտնի կազմակերպություններն անմեղ անուններ են վերցնում, «որպեսզի նպատակը անունեն չգուշակվի»։ Այդպես են արել, ասում է նա, մասոնները, կարբոնարիաները և ուրիշ գաղտնի կազմակերպություններ, որոնց ծրագիրը միշտ գաղտնի էր մնում։ «Միայն այնքանը գիտցված էր, որ այս անունով ընկերություններ կան, բայց ով են ընկեր գրվողներ, ով կգրե ընկերություն. ժողովքներուն տեղը ուր է. մեծերնին ով է. ընկերության պայմաններին և կանոնին ինչ է, ասոնք խորին գաղտնության մեջ ծածկված մնացին»[1]։

Գրքի այն հատվածին կցած ծանոթագրության մեջ, որտեղ ասվում է թե Եվրոպայում գաղտնի ընկերություններն իրենց կոչում են «Մարդասիրական ընկերություն», «Թանգարան վերծանության» և այլն, Տերոյենցը գրում է, «զարմանալ պետք չէ, որ այս անուններեն մեկը կամ երկուքը ինչպես մտեր են մեր մեջ և ընկերություններու անուն եղեր են»[2]։

---

[1] «Խորհուրդ գաղտնի ընկերության», 1863, էջ Ը։

[2] Նույն տեղում, էջ Ը-Թ։

Ինչպես հայտնի է, գաղտնի այն կազմակերպությունը, որին Տերոյենցը կոչում էր «դոնամիջյաններ», պաշտոնապես կոչվում էր «Թանգարան վերծանության»[1]։

Տերոյենցը, նույն առաջաբանում ասում է, որ նման գաղտնի ընկերությունների գաղափարական հիմքերն են Վոլտերի, Ռուսսոյի, Հելվեցիուսի, Հոլբախի և ուրիշների գաղափարները, որոնք «սուրբ գրոց» դեմ գալով անբարբշտություն են տարածել ժողովրդի մեջ, մանավանդ Վոլտերի «Թունալից գրքերը» և Ռուսսոյի «իմաստակական գրքերը»։ Սրանք են, որ «խորհելու ազատությունը» տալով մարդկանց, մոլորեցրել են նրանց։

Եթե Տերոյենցը թաքցնում էր ընթերցողից, որ հրատարակելով այդ գիրքը, կատարում է սուլթանական կառավարության առաջադրանքը, ապա չի թաքցնում, որ նա այդ աշխատանքը կատարելու համար պատվեր է ստացել «եկեղեցական և աշխարհական կարգի մեծարգո և պատկառելի անձերե» և որ «նոցա խնդրովն է» հրապարակում այդ գիրքը[2]։

Հրատարակելով այդ, Տերոյենցը կարծում էր, որ Նալբանդյանի կողմնակիցների քարոզած գաղափարները, մասնավորապես «ժանտ անհավատությունն ալ անհետ կըլլա մեր ազգին մեջեն իր արմատովը, և ամեն ճյուղերովը»[3]։

Որ Տերոյենցը իր վերոհիշյալ աշխատությունը հրապարակելիս հիմնականում նկատի ուներ Նալբանդյանի և նրա գաղափարական բարեկամների գործունեությունը, կասկածից վեր է։ Տերոյենցը այդ բանը չի էլ թաքցնում։ Նա իր թարգմանած աշխատությանը կցած տողատակի ծանոթագրությունների մեջ հաճախ միջամտում է հեղինակի մտքերին և հայտնում, որ հայ իրականության մեջ նման աշխատանքներ կատարողներ կան, որոնցից է «Հյուսիսափայլ» լրագիրը և Նալբանդյանց անուն մեկը», որ «Նալբանդյանը դևերուն գոյությունը չընդունած ատեն ասանկ ըրավ»[4]։

Առհասարակ ուշագրավ են աշխատությանը Տերոյենցի կցած այդ ծանոթագրությունները։ Նա ամենից շատ սարսափում է այն փաստից, որ անհավատների մեջ «օրինավոր իշխանության չհնազանդիլ սովրեցնողներ խիստ շատ կան» և որ «անհավատներուն վարդապետությունը տարածված տեղը հարկավ ապստամբություն և արյունահեղություն կըլլա»[5]։

Տերոյենցը քանիցս փորձում է գաղտնի կազմակերպությունների որդեգրած հիմնական գաղափարներից մեկը համարել կոմունիզմը։

1863 թ. վերջերին Տերոյենցը նորից է սկսում հրատարակել «Երևակը», որտեղ շարունակելով հանդերձ գաղտնի կազմակերպությունները ներկայացնել որպես մոլորված մարդկանց խմբեր, լայն ճակատի վրա քննության է առնում նման կազմակերպությունների ծրագրերը և նրանց գաղափարական հիմքերը, այստեղ է, որ նա արդեն շոշափում է այն հարցերը, որ բարձրացվում էին «Երկրագործության» մեջ։

Տերոյենցի կարծիքով, Նալբանդյանի և նրա համախոհների ուսուցիչները ֆրանսիական 18-րդ դարի մատերիալիստներն են։ Նա գաղափար չունենալով

---

[1] Տերոյենցը Սվաճյանին կոչում էր «դոնամիջյան», իսկ Սվաճյանը, բառախաղ կատարելով, Տերոյենցին կոչում էր «ազամամիջյան»։

[2] «Խորհուրդ գաղտնի ընկերությանց». առաջաբան։

[3] Նույն տեղում, էջ 50։

[4] Նույն տեղում, էջ 51։

[5] Նույն տեղում, էջ 74։

ռուս 60-ականների մասին, ծանոթ չէր և չէր կարող նշմարել, որ Նալբանդյանի գաղափարական ուսուցիչները եղել են Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, և այլ ռուս ռևոլյուցիոն դեմոկրատ մտածողներ և ոչ թե Վոլտերն ու Ռուսսոն, որոնց անշուշտ ծանոթ էր Նալբանդյանը և իր համար պասիվ էր համարում ընդունել նրանց առաջադիմական գաղափարները։

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության բարձրացրած հարցերից Տերոյենցը քննության է առնում հատկապես երկու հարց՝ հողի, ինչքի հավասարության հարցը և ազատության հարցը։

Տերոյենցը, որ արդեն Նալբանդյանին համարում էր «Ռուսսո անհավատին» հետևող մի անձնավորություն, փորձում էր ցույց տալ, որ նրա քարոզած հողի հավասարության գաղափարը գալիս է Ռուսսոյից, իսկ նրա աթեիզմը՝ Վոլտերից։ Բայց մի բան նկատել էր Տերոյենցը, այն, որ Նալբանդյանի գաղափարները Ռուսսոյի և Վոլտերի քարոզած գաղափարներից «քիչ մը անդին կերթան»։ Նա չէր տեսել, որ այդ «անդին» գնացող գաղափարները հարակցվում են ռուս վաթսունականների գաղափարների հետ։

Աստվածաշնչից, ավետարանից, սրբերի վարքագրություններից կատարած մեջբերումներով «հիմնավորելով» այն թեզը, որ հավասարությունը աստծուն անհաճո մի գործ է, Տերոյենցը գտնում է, որ միայն կրոնը, հավատքը կարող են արգելք հանդիսանալ հավասարության գաղափարի տարածմանը, և որ «ամեն ատեն աղքատ կա աշխարքս», բայց հավատք եղած տեղը աղքատները չեն ապստամբվիր»[1]։

Ավելի կոնկրետացնելով իր միտքը, Տերոյենցը, հավասարության գաղափարի հիմնական կրողներ համարում է սոցիալիստներին ու կոմունիստներին, որոնց նա դասում է «անհավատության մեջ գլորված» մարդկանց շարքին, մանավանդ «քոմունիստ ըսվածները, որ «ամեն բան հասարակաց և ամեն մարդու հարստություն կուզեն»[2]։

Ըստ Տերոյենցի՝ ժամանակակից փիլիսոփայության մեջ մեծագույն չարիքը՝ հողի հավասարության քարոզն է։ Նա այն կարծիքին է, որ երկրագնդի ստեղծման օրվանից գոյություն են ունեցել տիրապետողներ և տիրապետվողներ, շահագործողներ և շահագործվողներ, և որ գաղտնի կազմակերպությունների ծրագրի այն մասը, որը վերաբերում է կալվածատիրական հողերի բռնի գրավմանն ու գյուղացիությանը բաժանելուն, պարզապես կողոպուտ է և թալան։ Այսպես, նրա թարգմանած «Ժակմեն Կլես» աշխատության մեջ որպես ավազակներ և գողեր են նկարագրվում այն մարդիկ, որոնք ըստ հեղինակի ցերեկները զբաղված են երկրագործությամբ, հողի մշակմամբ, իսկ երեկոները կողոպտում և թալանում են կալվածատերերի հարստությունը։ Տերոյենցը պաշտպանում է այն կարծիքը, որ կալվածատիրոջ հողի մեջ ծնված ու մեծացած գյուղացին պարտավոր է համարվելու նրա ճորտը, կախում ունենալու նրանից, հարկ տալու կալվածատիրոջը։ Նրա թարգմանած երկերից մեկի հերոսը հպարտությամբ ասում է «հարկ տալու պարտական էի ազնվականներուն, որոնց հողի վրա ծնած էի»[3]։

Տերոյենցը քննության է առնում նաև ազատության հարցը, այն վերցնելով իր սոցիալական և քաղաքական բովանդակությամբ։

---

[1] «Արևակ», 1861, № 110։
[2] «Արևակ», 1862, № 121։
[3] «Արևակ», 1862, № 122։

Ուշագրավ է Տերոյենցի բանավեճը Հեգելի հետ։ Հեգելի իդեալիզմը, այն, որ նա առաջնությունը տալիս էր մտածողությանը, բացարձակ իդեային, չի բավարարում Տերոյենցին։

«Հեգելի տված կրթությունը տարածված ժամանակեն ի վեր ամենուն բերանը պտտած սա երկու բառերն են— ազատություն և անկախություն։ Ի՞նչ բանե, ուրկի՞ց կախում չունենալ կուզեն։ Աստուծմե՞, ավանդություններե՞»[1]։ Մեջ բերելով Ֆոխտի այն միտքը, թե քանի որ ազատություն է ուզում, աստված չի ուզում, եզրակացնում է, որ ազատության ձգտելը հենց անաստվածություն և հեթանոսություն քարոզել է։

«Խորհելու, և խոսելու ազատությունը» բոլոր չարիքների արմատ համարող Տերոյենցը փորձում է հիմնավորել այն տեսակետը, որ մարդ արարածը երկրագնդի վրա հպատակվելու և ենթարկվելու է թագավորին, նրան ընդունելու է որպես աստծո փոխանորդ և պարտավոր է «հնազանդ ըլլալ» նրան՝ առանց ազատության մասին մտածելու։

Ըստ նրա՝ «մարդս մեծ իր սպասավորության մեջ՝ իր մեծավորը ունի, կամ ի վարձու մտնողը իր վարձատան և վարձահատույցը, որոնց ծառայություն և սպասարկություն ընելե ալ մարդս ազատ չէ»[2]։

Անդրադառնալով քաղաքական ազատության հարցին, Տերոյենցը գրտնում է, որ Թյուրքիայում թուրքական մամուլն անհամեմատ ավելի զուսպ է պահում իրեն, քան հայկական մամուլը, որը խոսում է մամուլի ազատության մասին և քարոզում վտանգավոր մտքեր։ Նա պահանջում է կառավարությունից խիստ օրենքներ սահմանել հայկական մամուլի, մասնավորապես անլեգալ հրատարակությունների նկատմամբ։ Նման հրատարակությունները համարելով հասարակության համար չարիք և վտանգավոր, նա նշում է, որ այդպիսի անլեգալ և հակակառավարական հրատարակությունների «առաջին օրինակը Եվրոպայի հեղափոխականները տված են»։ Անդրադառնալով հայ իրականության մեջ նման հրատարակությունների սկզբնավորման փաստին, նա գրում է, որ այդպիսի անլեգալ հրատարակություններ մասնավորապես թռուցիկներ Պոլսում սկսել են հրատարակվել և ժողովրդի մեջ բաժանվել «1860 թվականի վերջերեն ի վեր», այսինքն այն օրերից, երբ Մ. Նալբանդյանը հիմք դրեց Պոլսի գաղտնի կազմակերպությանը։

Ամենայն հավանականությամբ Տերոյենցը ակնարկում է 1860 թվականի դեկտեմբեր ամսին Պոլսում տարածված մի քանի թռուցիկների, որոնց մի մասը նվիրված էր Պողոսյան— ապողոսյան հայտնի պայքարին, իսկ մի մասը, որն ուներ շեշտված հակաբռնապետական, հակակառավարական բովանդակություն, հրատարակված էին անհայտ այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնք խոսում էին Թյուրքիայում բնակվող ժողովուրդների անունից։

Տերոյենցը ներկայացնում էր հասարակական մի ամբողջ խավի իդեոլոգիան։ Նա համարվում էր Կ. Պոլսի պատրիարքարանի և ամիրայական-ազնվական դասի դաղափարախոսը, սակայն նրա պարբերականի ազդեցության շրջանակները շատ նեղ էին։ Այն բացարձակ ռեակցիոն գաղափարախոսությունը, որ պաշտպանվում էր «Երևակի» էջերում, այն ապարդյուն ջանքերը, որ գործադրում էր Տերոյենցը ապացուցելու համար դևերի, սատանաների գոյությունը, հանդերձյալ կյանքի բարիքները, քչերին միայն կարող էին մոլորեցնել, մանա-

[1] «Երևակ», 1862, № 131։
[2] «Երևակ», 1864, № 5։

վանդ այնպիսի մի տասնամյակում, երբ հայ հասարակական կյանքում բավականաչափ տարածված էին ժամանակի առաջավոր գաղափարները։

Հայ հասարակական կյանքում գործում էր մի այլ կենտրոն, որն անհամեմատ ավելի մեծ նյութական և բարոյական հնարավորություն ուներ, մասնավորապես երիտասարդության վրա ազդելու համար։

Այդ՝ Մխիթարյան միաբանությունն էր, որը 150 տարվա գոյության ընթացքում իր հրատարակած հարյուրավոր գրքերով, պարբերական մամուլով և դպրոցներով խոշոր ազդեցություն էր թողնում կուլտուրապես հետամնաց պայմաններում ապրող հայ երիտասարդության վրա։

Մխիթարյանների պայքարի մեթոդները միանգամայն տարբեր էին Տերոյենցի անմիջական ու պարզ մեթոդներից։ Նրանք իրենց հրատարակություններում դևերի, չարքերի գոյության շուրջը վեհեր բաց չէին անում, ընդհակառակը հրատարակում էին գիտական որոշ նորություններ, զարկ էին տալիս անտիկ գրականության ու պատմագրության հրատարակության գործին և այլն։

Այնպիսի մի միաբանություն, որը հայ իրականության մեջ կատարում էր քաղաքական աշխատանք՝ կաթոլիկություն տարածելով հայերի մեջ, պայքարում էր ազգային-աղատագրական շարժման դեմ, կարո՞ղ էր լուռ անտարբերությամբ դիտել Մ. Նալբանդյանի գաղափարների տարածումը հայ ժողովրդի մեջ։ Անշուշտ չէր կարող։ Մյուս կողմից ինքը՝ Վատիկանը կարո՞ղ էր հանդուրժել նման մի անտարբերություն Մխիթարյանների կողմից։

Վատիկանը ակտիվ կերպով միջամտում էր քաղաքական կյանքին, յուրաքանչյուր ռևոլյուցիոն շարժումից հետո հանդես էր գալիս այն դատապարտող գրություններով։ Վատիկանը 1864 թվականին, այսինքն՝ Առաջին ինտերնացիոնալի հիմնադրման տարին, հրատարակել էր հայտնի «Սիլլաբուսը» ընդդեմ կոմունիզմի և սոցիալիզմի։

Մի ուշագրավ փաստ ցույց է տալիս, որ նույն այն տարիներին, երբ հայ հասարակական կյանքում արծարծվում էին նման հարցեր, Վատիկանը հրահանգել է Մխիթարյաններին՝ պայքար սկսել պրոգրեսիվ գաղափարների դեմ։

Ա. Արփիարյանը գրում է, որ 1868 թ. մի երեկո տխուր վիճակում են տեսել Ղևոնդ Ալիշանին, երբ հարցրել են, թե ինչն է՝ նրա վշտի պատճառը, Ալիշանը մեծ դժվարությամբ պատասխանել է, որ Վատիկանից ստացվել են հրահանգներ, որոնք արգելում են ազգային դաստիարակությունը դպրոցում և պահանջում են պայքարել ազգային գաղափարների տարածման դեմ[1]։

Ինչով է պատասխանել Մխիթարյան միաբանությունը Վատիկանից ստացվող այդ հրահանգներին։

«Բազմավեպի» 1868—70 թվականների հավաքածոները դրա լավագույն պատասխանն են։

Այդ 3 տարիների հավաքածոներից եթե հանենք Ալիշանի ստորագրությամբ լույս տեսած փոքրաթիվ աշխատությունները, ապա այնտեղ դժվար է գտնել որևէ բան հայկական, փաստորեն կաթոլիկական կրոնի, սրբերի վարքագրությունների մի ժողովածու է այն։

Վատիկանի առաջարկին Մխիթարյանները պատասխանում են մի այլ ձեռնարկումով ևս։

---

[1] «Մասիս», 1887, № 3875։

1868 թ. Վենետիկի Մխիթարյանները հայատառ թուրքերեն լեզվով մի թարգմանական վեպ են լույս ընծայում «Լիոնելլուի արկածները» վերնագրով։ Չնայած այն արտաքուստ թվում է մի արկածային երկ, իրականում արկածները բոնազրոսիկ են, շինծու, հաճախ ընդհատվում են գաղափարական ճառերով, տենդենցիոզ հերյուրանքներով՝ առաջադիմական գաղափարախոսության հասցեին։ Վեպում խոսվում է մինչև 1861 թ. դեպքերի մասին, կնշանակի այն արագ կերպով թխվել է ու թարգմանվել մի շարք լեզուներով, այդ թվում և հայերեն։

Վեպի սյուժեն բավականաչափ նման է Տերոյենցի թարգմանած «Ժակմեն Կլես» և «Խորհուրդ գաղտնի ընկերությանց» վեպերի սյուժեին։ Ինչպես «Տերոյենցի թարգմանած վեպերի, այնպես էլ այս վեպի գլխավոր հերոսն իր երիտասարդական տարիներին վարում է անառակ կյանք, կապվում գաղտնի կազմակերպությունների հետ, թափառում է ամբողջ աշխարհով մեկ, մասնակցում զարելի ոճրագործությունների, իր պատկանած գաղտնի կազմակերպության առաջադրանքը կատարելով, սպանում է իր ամենահավատարիմ ընկերոջը և այլն։ Այս բոլորից հետո, զղջում է, անձնասպան լինում, թողնելով իր ընդարձակ օրագրերը, որոնք, ըստ էության կազմում են վեպի բովանդակությունը։

Բայց ինչ գաղտնի կազմակերպություններ են դրանք, որ այլասերում են երիտասարդությանը, ապականում հասարակական կյանքը, իբր թե վնասում մարդկության նորմալ գոյությանն ու ազատությանը։

Այստեղ է, որ երևում է եզվիտ հեղինակի քաղաքական տենդենցը, երևվում է Վատիկանի առաջադրանքով գրված լինելու փաստը։ Բանից պարզվում է, որ դրանք ոչ թե իսկապես ոճրագործ միություններ են, այլ ռևոլյուցիոն-ազատադրական նպատակներ հետապնդող կազմակերպություններ։ Լիոնելլուն թունոտ լեզվով է խոսում 60-ական թվականներին Բալկաններում, Իտալիայում, և այլ վայրերում ծավալված ազատագրական պայքարի մասին։ Նա արդարացնում է Իտալիայի ստրկացումն Ավստրալիայից, այդ ստրկացման դեմ պայքարողներին համարում ավազակներ, մարդասպաններ։ Գարիբալդիի, Մաձինիի գլխավորած ազատագրական պայքարը Լիոնելլուի արկածների մեջ ներկայանում է պարզ ավազակություն ու բարբարոսություն [1].

«Լիոնելլուի» հեղինակը քարոզում է հլություն և հնազանդություն Պապի հավիտենական գերիշխանությանը։

Հեղինակի կարծիքով, վերոհիշյալ գաղտնի կազմակերպությունների առաջացման հիմնական պատճառը ֆրանսիական XVIII դարի մատերիալիստների գաղափարներն են, բոլոր ոճիրների աղբյուրը՝ Վոլտերի, Դիդրոյի հերետիկոսական մտքերն են։ Ռուսսոն այնտեղ ներկայանում է մարդկությանը մոլորեցնող մի անձնավորություն [2]։

Գիրքը իր ամբողջությամբ ուղղված է, ինչպես ասվեց, մասնավորապես երիտասարդական գաղտնի կազմակերպությունների դեմ։ Ուշագրավ է, որ նման կազմակերպությունների գոյությունն ակնարկվում է նաև Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում, Կ. Պոլսում, Իզմիրում, Բատուայում և այլն [3], այսինքն՝ այն քաղաքներում, որտեղ, ինչպես հայտնի է, հայ երիտասարդները նույնպես ընդգրկվում էին նման կազմակերպությունների մեջ։

---

[1] Տես Լիոնելլունուն սերկուգեշքի, «Զուգկպպ Կարրբալդի» գլուխ։ էջ 136—161։
[2] «Լիոնելլունուն սերկուգեշքի», Վենետիկ, 1868, էջ 80։

Անկախ այն բանից, որ «Լիոնելլուն» թարգմանական գործ է և անմիջապես չի առնչվում Նալբանդյանի անվան հետ, ըստ էության այն ուղղված է Նալբանդյանի և նրա համախոհների դաղափարների տարածման դեմ։ Այդ բանն առավել համոզիչ կարող է թվալ, եթե նկատի ունենանք, որ հայ լիբերալիզմի առավել արմատական թևն անդամ հեռու չէր գնում լեգալ պայմաններում մղվող պայքարից և ռեֆորմների պահանջից։ Անլեգալ կազմակերպությունների սկիզբը հայ իրականության մեջ կապված է Մ. Նալբանդյանի անվան հետ։

«Լիոնելլուի» լույս ընծայման տարում, 1868 թ. Պոլսում հրատարակվում է Մ. Հիսարյանի «Նեռն կամ կատարած աշխարհի» վեպը։ Հիսարյանի հերոսն էլ «մոլորվել» է հիմնականում դաղտնի կազմակերպությունների հետ կապված լինելու հետևանքով, «դաղտնի ընկերությանց և ժողովակաց մեջ մտնելով, նոցա թարուն և գլխավոր գործակիցը եղավ»[1]։ Նա էլ ծանոթ է այդպիսի կազմակերպությունների քաղաքական ծրագրերին, ծանոթ է ժամանակի «աշխարհավեր» սոցիալիստների դաղափարներին[2]։

Իսկ որո՞նք են աշխարհի վախճանը մոտեցնող այդ դաղափարները։ Ամենից առաջ այն, որ մարդիկ սկսել են հանդես դալ աստուծո կողմից հաստատված օրենքների ու կարդ ու կանոնի դեմ։ Տիրոջ և ծառայի փոխհարաբերությունը խախտվել է, մարդիկ սկսել են խոսել հարուստի ու աղքատի տարբեր դիրքերի վրա կանգնած լինելու և այլ հարցերի մասին։ Հիսարյանը սարսափում է իր բացասական հերոսի այն դատողություններից, թե աշխարհի դրժբախտության պատճառն այն է, որ մի խումբ մարդիկ աշխատում են, ուրիշները վայելում, որ «բռունցք հզորին, զորացան ի վերա գլխո տկարին» և որ այդ ամբողջը սկսվել է այն բանից, երբ մարդիկ մասնավոր սեփականության դաղափարն են պաշտպանել, հետևաբար պետք է վերացնել մասնավոր սեփականությունը, որ ամեն ինչ կարդին լինի։

Վեպի հերոս Լևոնի կարծիքով, բոլոր ժողովուրդները եղբայրներ են, նախախնամությունն այդպես է ստեղծել մարդկանց, և ով որ առաջինն ազգությունների մեջ տարբերություն դրեց, նա է, որ «աշխարհը ապականեց»։ Լևոնը առաջարկում է պայքարել այդ բոլորի դեմ է փրկել աշխարհը։ «Մինչև որ այս իրաց վիճակը չփոխվի, մինչև որ հասարակաց օդուտը մասնավորին տեղ չրռնի, մինչև որ վերջապես ընդհանուր հավասարությունը մարդկային ազգին մեջ չտիրե... երջանկությունն եղջերաքաղ մի է անհնարին և ճշմարտություն անուն վերացական մարդոց համար»[3]։

Հիսարյանի բացասական հերոսը զարդացնում է մատերիալիստական տեսակետներ մարդու և երկրագնդի առաջացման մասին։ Նրա կարծիքով, նյութը «ինքնին կա և ինքնին մեռնի, որ նա անդադար սպառելի և նորոդելի է»[4]։

«Նեռն կամ կատարած աշխարհի» վեպում Հիսարյանն իր բացասական հերոսի դեմ պայքարելիս օդտագործում է ճիշտ այն փաստարկումները, ինչ

[1] Մ. Հիսարյան, Նեռն կամ կատարած աշխարհի, էջ 391։

[2] Մենք մեր մի հոդվածում համառոտ հիշատակություն ենք արել «Նեռի» մեջ արծարծվող հարցերի և Նալբանդյանի դաղափարների առնչության մասին։ Տես մեր «Մ. Նալբանդյանի երկրորդ ուղևորության հետ կապված մի քանի հարցեր» հոդվածը, «Տեղեկագիր», 1949, № 9։

[3] Մ. Հիսարյան. Նեռն կամ կատարած աշխարհի, էջ 191։

[4] Նույն տեղում, էջ 198։

որ օգտագործում էր Տերոյենցը՝ Նալբանդյանի դեմ մղած բանավեճում։ Հայտնի է, որ «Հրաշափառ խայտառակության» շուրջ՝ Նալբանդյանի և Տերոյենցի միջև բորբոքված բանավեճի ժամանակ, Տերոյենցի ամենաուժեղ կռվաններից մեկն այն էր, թե Նալբանդյանը, չընդունելով դևերի գոյությունը, ըստ էության չի ընդունում քրիստոնեական կրոնը։

Տերոյենցը գրում էր Նալբանդյանի մասին. «Դև կենալուն հավատալու չէ կըսէ Պ. Ս. Շահբեգը... իրեն մկրտվիլ և քրիստոնյա ըլլալը ինչ կանվանե ուրեմն, որ արդարանալ և մեղքերեն մաքրվիլ և դևերեն ազատվիլ և աստուծո ծառայել ուզելով մկրտված է»[1]։

Հիսարյանն անդրադառնալով նույն հարցին, գրում է. «դաս մը իմաստասիրաց, կուզեն ուրանալ չարին էությունը, որպիսի հիմարություն, քան զկարծելն զմարգիկ բարեծնունդ ի բնե»[2]։

Բայց կա նաև ավելի զորավոր մի փաստ։ Հիսարյանի կարծիքով իր բացասական հերոսն այդ դաղափարները ձեռք է բերել Լոնդոնի ռուս քաղաքական գործիչներից, որոնց հետ նա կապ է ունեցել։ Ինչպես վեպում է ասված, նրա հերոսը «Լոնդրայի քաղաքական փախստականաց հետ թղթակցության մտած է»։

Հայտնի է, որ պատմական Լևոն Լուսինյանին նույնպես, որը պատկերված է որպես վեպի բացասական հերոս,— վերագրել են կապ Գարիբալդու շարժման հետ, բայց դա չի ճշտվել, իսկ Լոնդոնի հետ որևէ կապ նա չի ունեցել և որ ամենից կարևորն է, նրա մտավոր կարողության համար միանգամայն անհարիր են այն առաջադիմական դաղափարները, որոնք վերագրվում են նրան Հիսարյանի կողմից։

* * *

Այսպիսով, 1862—1872 թթ. տասնամյակում Նալբանդյանի «Երկրագործության» մեջ բարձրացվող հարցերի քննարկմամբ հանդես են եկել մի ամբողջ խումբ մարդիկ։ «Մեղվի» շուրջ համախմբված դեմոկրատական գործիչները Հ. Սվաճյանի գլխավորությամբ հիմնականում պաշտպանել են Նալբանդյանի դաղափարները երկրագործության կարևորության, հողը դյուղացուն հանձնելու, մարդու իրավական և քաղաքական ազատության, սեփական արդյունաբերության կարգացման և այլ հարցերի մասին։ Լիբերալ տնտեսագետներն ու պատմաբանները, հաճախ հենվելով անգամ Նալբանդյանի վրա, դուրս չեն եկել ընկերություններ կազմելու, հարուստներից բարեգործություն պահանջելու սահմանից, օրինակ՝ Հ. Վարդանյանը, Հ. Ջրասունյանը, Հ. Պառնասյանը, Մ. Թիմուրյանը և ուրիշներ։ Սրանց աշխատություններն ուշադրավ են հատկապես նրանով, որ մի կողմից ցույց են տալիս Նալբանդյանի հայացքների նրանց յուրահատուկ ըմբռնումը, մյուս կողմից՝ հայ տնտեսագիտական մտքի որոշ աստիճանը՝ XIX դարի 60-ական թվականներին։

Եվ վերջապես Նալբանդյանի «Երկրագործության» բարձրացրած հարցերի դեմ հանդես է եկել պահպանողական հոսանքը՝ հանձինս Տերոյենցի, Մխիթարյանների և Հիսարյանի։

«Երկրագործության» բարձրացրած հարցերի քննարկումը կամ նրա արձագանքները սրանով չեն սպառվում։ Մեր վերցրած շրջանը ընդգրկում է ըն-

[1] «Երևակ», 1860, № 86։

[2] Մ. Հիսարյան. Նեռն կամ կասարած աշխարհի, էջ 208։

դամենը մեկ տասնամյակ։ Մենք կանգ չենք առնում հետագա տասնամյակների վրա,— երբ այդ գաղափարների ուղղակի կամ անուղղակի քննարկմամբ արևմտահայ իրականության մեջ հանդես են եկել Հ. Պարոնյանը, Ս. Տեր-Սարգիսենցը, Ա. Արփիարյանը, Ա. Այվազյանը, Ա. Պիպեռճյանը և շատ ուրիշներ, անշուշտ միշտ քննարկվող հարցերին տալով յուրովի բացատրություն։

Նալբանդյանի ռևոլյուցիոն-դեմոկրատական հայացքները, որոնք բարձրացվել են «Երկրագործության» մեջ, այսպիսի լայն ու բավականաչափ տևական արձագանք գտնելով արևմտահայ իրականության մեջ, ազդելով հանդերձ հայ հասարակական մտքի վրա, դժբախտաբար սուլթանական պայմաններում հող չգտան կենսագործման։

Այդ աշխատության ազդեցությունն անհամեմատ ավելի լայն շրջանակներ ունեցավ արևելահայ իրականության մեջ, որտեղ արդեն նախապատրաստեց գրողների և հրապարակախոսների մի ամբողջ պլեադա (Ա. Սուլթանշահ, Մ. Բուդաղյան, Ղ. Աղայան և ուրիշներ), որոնք հավատարիմ զինակցի վստահությամբ բռնեցին իրենց ձեռքը Նալբանդյանի ավանդած դրոշը և այն առանց ցած դնելու հասցրին մինչև 900-ական թվականները, երբ առաջացավ սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսությունը հայ իրականության մեջ և աշխատավոր ժողովրդի տնտեսական պայքարի ուղին նշողների դերում հանդես եկան Սովետական Միության Կոմունիստական պարտիայի այնպիսի պանծալի գավակներ, ինչպիսիք են հանճարեղ Լենինի մեծ զինակից Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը։

Բայց այդ՝ հատուկ ուսումնասիրության նյութ է։